ՎԱՉԱԳԱՆ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ-2

Դասագիրք 2-րդ դասարանի համար

Երկրորդ, բարեփոխված հրատարակություն

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մաս 1

Նկարիչ՝ Խորեն Հակոբյան

ԵՐԵՎԱՆ
ՄԱՆՄԱՐ
MANMAR
2022

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2Հ g72
Մ 239

Հեղինակներ՝ Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան

Մ 239 Մայրենի–2: Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք:
/Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան/.
– Եր.: ՄԱՆՄԱՐ, 2022. – 88 էջ:

ՀՏԴ 373.167.1+809.198.1 (075.3)
ԳՄԴ 81.2Հ g72

ISBN 978-9939-62-178-4

© Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., 2010
© ՄԱՆՄԱՐ, 2010

ԻՄ ԴՊՐՈՑԸ ԵՎ ԳՐՔԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ԲԱՐԵՎ, ԵՍ ԳԻՐՔՆ ԵՄ

Սիրելի՛ երեխաներ: Դուք հիմա կարդում եք ինձ: Բայց մինչև այս տեսքն ստանալը ես շատ երկար ճանապարհ եմ անցել: Իսկ դուք գիտե՞ք, թե հին ժամանակներում մարդիկ ինչպես էին գրում և ինչի վրա: Շատ զարմանալի է, բայց մարդիկ գրում ու նկարում էին… քարերի վրա: Ա՛յ, այսպես.

Հետո մարդիկ սկսեցին կավից* սալիկներ պատրաստել և սուր փայտիկնե-րով գրել թաց սալիկների վրա: Կավե սալիկները չորացնում էին, և «գիրքը» պատրաստ էր:

Հետո մարդիկ սովորեցին գրել տերևների վրա, ծառերի կեղևների վրա, փոքրիկ տախտակների վրա:

Մարդիկ գրում էին նաև կենդանիների կաշվի վրա: Ոչխարների, այծերի, հորթերի կաշին լավ մաքրում էին, հարթեցնում, հավասար մասերի բաժանում ու փետուրե գրիչներով գրում: Հետո կարում էին այդ էջերը, կազմում, և գիրքը պատրաստ էր:

Մի անգամ թշնամին հարձակվում է մեր երկրի վրա: Ավերում է մեր քաղաքներն ու գյուղերը, վանքերն ու գրադարանները: Երկու հայ կին այրվող վանքի գրադարանից փրկում են մի հսկայական գիրք ու բերում հասցնում Էջմիածին: Այժմ այդ գիրքը պահվում է Երևանի Մատենադարանում*: Այդ գիրքը գրելու համար օգտագործել են 600 հորթի կաշի:

Այժմ գրքերը տպագրում են թղթի վրա՝ տպարանում: Դրանք այն գրքերն են, որոնք դուք հիմա կարդում եք:

ԻՄ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Ռազմիկ Դավոյան

Իմ այս գրքում
Կա ամեն ինչ,
Ամեն ինչից՝
Մի քիչ-մի քիչ:

Մի քիչ գարուն,
Մի քիչ ամառ,
Անսահման լույս,
Մի քիչ խավար:

Մի քիչ աշուն,
Մի քիչ ձմեռ,
Մի քիչ նախշուն*
Հովիտ* ու լեռ:

Կան բալիկներ
Եվ անպատճառ՝
Մի քիչ խելոք
Ու մի քիչ չար:

Իմ գիրքն արթուն,
Աշխույժ այսպես,
Մեծ մի տուն է,
Ու մեջը՝ ես:

Հարցեր

1. Քեզ ո՞ր բառատողը դուր եկավ: Ինչո՞ւ: Ինչ է ասվում այնտեղ գրքի մասին:

2. Բանաստեղծության ո՞ր բառատողին է վերաբերում այս կատականկարը:

3. Գիրքը քո տունն է: Ուրիշ ինչ կուզենայիր, որ այնտեղ լիներ:

1 Հանելուկ

Ոչ բերան ունի և ոչ էլ լեզու,
Բայց զրուցում է ու քեզ հետ խոսում
Եվ շատ լավ գիտի, թե ինչ ես ուզում:

աշխույժ, նախշուն

2

Ո՞ր բառերն են «ընկերներ».

գիրք, խաղ, դպրոց, գրադարան, բակ, աշակերտ:

Այդ բառազույգերը գրի՛ր տետրում, հաշվի՛ր յուրաքանչյուր բառի հնչյունների և տառերի քանակները:

3

Ինչ են ցույց տալիս բառերի կողքին գրված թվերը.

իմ – 1, 1,
գիրք – 1, 3,
գարուն – 2, 3:

Բանաստեղծությունից գտի՛ր այն բառերը, որոնց կողքին կգրես 2, 2 և 3, 5 թվերը: Դրանք գրի՛ր տետրում:

ԳԻՐՔ

Վռամ Հովսեփյան

Բացում եմ քո դեմ ես մի ողջ աշխարհի,
Տանում եմ քեզ հանդի* ու ծովի գիրկը,
Քեզ համար դառնում լույսի ճանապարհի,
Քո ուղեկիցը* այդ ես եմ՝ գիրքը:

Երկու թև ունեմ ու անթիվ երես.
Շատ բան կպատմեմ, եթե ինձ սիրես:
Սիրիր ինձ, մանկիկ, թերթիր ինձ վստահ,
Քո լավ ընկերը այդ ես եմ՝ գիրքը:

Հարցեր

1. Ըստ բանաստեղծության՝ ինչ է գիրքը մարդու համար:
2. Ո՞րն է քո կարդացած առաջին գիրքը: Ինչ ես հիշում դրանից:
3. Ինչ կլիներ, եթե գրքեր չլինեին:

1 Հնչյուն-տառի երգը

Ես հնչյուն եմ՝ հնչում եմ,
Օդում ապրում, շնչում եմ,
Հենց գրեցիր՝ տառ եմ ես,
Գիր եմ արդեն բարետես:

աշխարհի, ճանապարհի

2
ա. Բանաստեղծությունից արտագրիր ե-ով սկսվող բառերը:
բ. Գրիր բառեր, որոնցում ե-ն լինի բառասկզբում, բառամիջում, բառավերջում:

4 Հանելուկ

Տպարանում շարում են,
Թել-ասեղով կարում են,
Շապիկ ունի նա հագին,
Մեր ուղեկիցն է անգին:

3
Առանձնացրու երկու խմբով. Ա, Ի, Վ, Օ, Դ, Ն:
Առանձնացման քանի՞ եղանակ գտար:

5
Լրացրու բաց թողնված տառերը (է կամ ե) և գրիր տետրում.
□ր□մ, □ր□կ, □մին, □ջ, □ջմիածին, □լակ, □ր□ս:

ՊԱՏՄՎԱԾՔՆ ԸՆԹԵՐՑՈՂ ԷՐ ՓՆՏՐՈՒՄ

Ռեյն Ռուադ

Լինում է, չի լինում՝ մի Պատմվածք է լինում: Պատմվածքն ընթերցող է փնտրում, որն իրեն կարողանա կարդալ: Գնում է անտառ: Հանդիպում է Նապաստակին:

– Նապաստակ, Նապաստակ, դու կարդալ գիտե՞ս,– հարցնում է Պատմվածքը:

– Գիտեմ,– վախեցած պատասխանում է Նապաստակը:

– Որ գիտես, կարդա՛ ինձ,– խնդրում է Պատմվածքը:

– Չէ՛, չեմ կարդա: Ես այսօր լավ չեմ կարողանում կարդալ,– ասում է Նապաստակը:

Պատմվածքն առաջ է գնում: Հանդիպում է Աղվեսին:

– Աղվե՛ս, Աղվե՛ս,– ասում է Պատմվածքը,– դու կարդալ գիտե՞ս:

– Իհա՛րկե, գիտեմ,– խորամանկ ժպտալով պատասխանում է Աղվեսը:



առաջ, խնդրել, կարդալ

Հարցեր

1. Պատմվածքն ինչո՞ւ էր ընթերցող փնտրում:
2. Նապաստակն ինչո՞ւ վախեցած պատասխանեց Պատմվածքի հարցին:
3. Ինչ ես կարծում՝ Աղվեսը կարդալ գիտե՞ր:

1 Կարդա՛ և հիշի՛ր

Երբ բառի մեջ և բառի վերջում լսում ենք o հնչյունը, բացի հատուկ դեպքերից, գրում ենք n տառը:

Օրինակ՝ խnսք, այn, հետn, զրn, խnճկnր, խnհանnց, լnղnրդ, Սիմnն:

2 Պատմվածքից արտագրիր այն բառերը, որոնց մեջ կան o և n տառերը:

3 Գիտե՞ս, որ...

Երբ Մեսրոպ Մաշտոցն ստեղծում էր հայոց տառերը, նա o և ֆ տառեր չստեղծեց: Դրանք հետո են մտել մեր այբուբենի մեջ:

4 Նույնտառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

արկ, թթու, տապ, հասկ:

Օրինակ՝ հասկ – հսկա:

Ասացվածք

Քայլ կարդաս, շայլ բան կիմանաս:

– Ինչ կլինի, կարդա՛ ինձ,– խնդրում է Պատմվածքը:

– Չէ՛, չեմ կարդա: Ակնոցս մոռացել եմ հավաքնում,– ասում է Աղվեսը:

Պատմվածքն առաջ է գնում: Հանդիպում է երկրորդ դասարանցի Արային: «Գուցե վերջապես բախտս բերի»,– մտածում է Պատմվածքն ու դիմում նրան.

– Դու կարդալ գիտե՞ս, փոքրի՛կ:

– Այո՛, գիտեմ,– պատասխանում է Արան:

– Կարդա՛ ինձ,– խնդրում է Պատմվածքը:

Եվ խելացի Արան առանց դժվարության կարդում է.

– Լինում է, չի լինում՝ մի Պատմվածք է լինում....

երկրորդ
վերջապես

Հարցեր

1. Ինչո՞ւ կենդանիները չկարդացին Պատմվածքը, իսկ Արան կարդաց:
2. Պատմի՛ր՝ ինչ կլիներ, եթե մարդիկ կարդալ չիմանային:
3. Եթե հանդիպեիր Պատմվածքին, ինչ կասեիր նրան:

1 Պատմվածք բառի տառերով կազմենք նոր բառեր.

Օրինակ՝ պատ, մատ, ատամ, տաք, տամա, տապ, ծամ, վատ, ամպ և այլն:

Այս բառախաղը կոչվում է բառամոցի:

Խնդուկ

– Ինչ ես անում, աղվե՛ս:

– Նամակ եմ գրում նապաստակին:

– Բայց դու գրել չգիտես:

– Ոչի՛նչ, նապաստակն էլ կարդալ չգիտի:

Երկխոսությունը ներկայացրեք դերային խաղով:

2 Ինչ կենդանի է «թաքնվել» շրջանիկների մեջ:



Տեսորում գրի՛ր այդ բառը:

3 Հանելուկ

Արագ-արագ
Փախչել գիտեմ,
Բայց չիմանամ՝
Միամիտ եմ.

Հենց գտնում եմ
Հարմար մի թուփ,
Թաքնվում եմ
Մի աչքս՝ բաց,
Մյուսը՝ խուփ:

4 Հանելուկի պատասխան բառով ընկերոջդ հետ խաղա՛ «բառամոցի»:

Առած

Պարիկ է, բայց խարիկ է:

ԱՐԱՆ ՈՒ ՇԱՐԱՆ

Կաս

Արան ու Շարան ընկերներ են:

– Ես շատ եմ սիրում դպրոց գնալ,– ասում է Արան:

– Իսկ ես չեմ սիրում,– ասում է Շարան:

– Ինչու:

– Չեմ սիրում գրել, կարդալ: Սիրում եմ խաղալ:

– Բայց ես էլ եմ սիրում խաղալ: Ուզում ես, արի միասին մի կախարդական խաղ խաղանք: Արի մուկ-ից փիղ սարքենք:

– Ինչպես:

– Նախ՝ արի գրենք մուկ: Գրեցիր: Հիմա մուկ բառի մեջ կ-ի փոխարեն գրենք ր: Ինչ ստացվեց: 11

Մեզ

1 ա. Բնագրից ընտրիր բառեր, որոնք սկսվում են ա, բ, գ, դ, ե տառերով և գրիր տետրում:

բ. Զորայր, Անի, Դավիթ, Էմին, Երազիկ, Գայանե, Բաբկեն անունները դասավորիր այբբենական կարգով և գրիր տետրում:

2 Ո՞ր տառերն են «թաքնված» դատարկ վանդակներում.

Է	Ը		Ժ	Ի	

3 Լրացրու բաց թողնված տառերը (օ կամ ո) և բառերը գրիր տետրում.

□րագիր, □ս□րդ, □որել, □գուտ, շ□որալ, ոլ□ել, հ□տ□տել:

4 Կարդա և հիշիր

Երբ տառը կարդալով արտասանում ենք, լսվում է այդ տառի հնչյունը: Երբ հնչյունը գրում ենք, ստացվում է այդ հնչյունի տառը:



5 Հորինիր մի պատմություն նկարի շուրջ:

Ասացվածք

Քաջ կարդացողը հասկացող կլինի:

– Մուր:
– Ճիշտ է: Հիմա մուր-ի մեջ մ-ն փոխենք հ-ի:
– Ստացանք հուր: Հուրն ինչ է:
– Հուրը կրակն է: Հուր-ի մեջ ու-ն փոխենք ո-ի:
– Ստացանք հոր: Բա փիղն ո՞ւր է:
– Սպասի՛ր, հիմա հոր-ը դարձնենք հող, իսկ հող-ը՝ փող:
– Հա՛, հասկացա: Փող-ի ո-ն կփոխենք ի-ի և կստանանք փիղ: Շատ լավ խաղ էր: Արի՛ էլի խաղանք:
– Չէ՛, չեմ խաղում: Դու ասում ես, թե գրել, կարդալ չես սիրում:
– Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ. տեսա՞ր՝ ինչքան գրեցի ու կարդացի: Էլի խաղանք, լա՞վ:

դարձնել

Հարցեր

1. Ինչ ես կարծում՝ Արան ու Շարան շարունակեցին խաղալ: Հիմնավորի՛ր:
2. Ինչն օգնեց խաղալու այս կախարդական խաղը:
3. Ինչ քայլերով ընկերները մուկ-ից ստացան փիղ: Գրի՛ր այդ բառաշարքը:
4. Ո՞Ւմ հետ կցանկանայիր ընկերանալ՝ Արայի՞, թե՞ Շարայի: Ինչո՞ւ:

1 Բառը բառի մեջ

Յուրաքանչյուր բառի մեջ գտի՛ր ուրիշ բառեր: Գրի՛ր տետրում և ընդգծի՛ր ձայնավորները.

նկար, անտեսանելի, պատճառ, արտասանել, տողադարձ:

2 Փոխակերպում

Տեսե՛ք, թե Արան ինչպես է մեկ-ից ստացել վեց.

մեկ – մեխ – ցեխ – ցեց – վեց:

Այժմ դու այծ-ից ստացի՛ր արջ.

այծ – այտ – □□□ – արջ:

Առած

Ուս ուսի որ քանի՝,
Սարեր շուռ կգանի՝:

ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ

Հովհաննես Թումանյան

Մի՛ լինիր ուրագի* պես՝
Միշտ դեպի քեզ,
Միշտ դեպի քեզ,
Այլ եղիր սղոցի՛ պես՝
Մեկ դեպի քեզ,
Մեկ դեպի մեզ:

3 Ինչո՞ւ պետք է լինել սղոցի նման, այլ ոչ թե ուրագի:

4 Քո կարծիքով՝ ինչպիսին է Արան. ուրագի՞ նման, թե՞ սղոցի:

ԱՐՋՆ ՈՒ ԳԻՐՔԸ

Հոբոս Ապեր

Խիտ անտառում մի բրդոտ,
Տրորելով ծիլ ու խոտ,
Որոնում է պտուղ, միրգ,
Բայց գտնում է մի լավ գիրք:
Գիրքն առնում է, հոտոտում,
Շուռ է տալիս, փնթփնթում.
– Տեսնեմ՝ ինչ է, որ այդքան
Մարդիկ գովում են սրան...
Ծամում, ծամում, ծամծմում,
Բայց ոչ մի համ չի առնում:
– Տեսեք՝ անհամ է որքան,
Արժե՞ գովել բա սրան.
Եթե լիներ մի լավ տանձ,
Ես կասեի՝ գա՛նձ է, գա՛նձ:
Իսկ սրանից ի՞նչ օգուտ,–
Փնթփնթում է արջը բութ:

1 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ և վերնագրի՛ր:

բրդոտ, արջ

Հարցեր

1. Արջն ի՞նչ էր որոնում անտառում: Ինչո՞ւ:
2. Ինչո՞ւ էր փնթփնթում արջը: Ի՞նչ խորհուրդ կտաս նրան:
3. Ինչո՞ւ գիրքն արջին դուր չեկավ:
4. Քո կարծիքով՝ ինչո՞ւ է արջը «բութ»: Ուրիշ ի՞նչ բառերով կբնութագրես նրան:

2 Հանելուկ

Խոր անտառում բույն գտավ,
Ողջ ձմեռը քուն մտավ:
Գարուն եկավ՝ վեր կացավ,
Քուրքը* հագին հեռացավ:

Շուտասելուկ

Աչքը տնկած ծառի տանձին՝
Արջը թմփաց քարե բարձին:

3 Բառքամոցի

Անտառապահ բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

Առած

Սիրքը յոթ երգ գիտի,
յոթն էլ կանչի Մասին:

4 Արտագրի՛ր, լրացրո՛ւ ձայնավորները.
ծամ□լ, փնթփնթ□լ, որոն□լ, տրոր□լ, □գուտ, □նկեր, □նկույզ:

ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՁԱՅՆԱՎՈՐ ԵՆՔ

Վաս

– Տիգրա՛ն, մի քանի տա՛ռ տուր տառադարանից,– ասաց Վահեն:

Տիգրանը Վահեին տվեց ձ, ր, կ, տ, ն տառերը:

– Արի՛ բառեր կազմենք այս տառերով՝ կտն, ձրտ, կնձ:

– Չի ստացվում:

– Մի ուրիշ տառ էլ տո՛ւր:

Տիգրանը տվեց ա տառը: Նրանք միասին կազմեցին կար, տնակ, նկար, տանձ բառերը:

Նույն բաղաձայններով և ու ձայնավորով դո՛ւք կազմեք բառեր: Նույնը՝ ի, ո, ե ձայնավորներով:

Ի՞նչ ենք տեսնում: Առանց ձայնավորի չկա ոչ մի բառ:

1 Ձայնավորների երգը

Վեց եղբայր ենք ձայնավոր,
Բայց գրվում ենք ութ տառով,
Եվ չեն կարող պարզապես
Լինել բառեր առանց մեզ:

2 Ավելացրո՛ւ ձայնավորներ, ստացի՛ր բառեր և գրի՛ր տետրում.

տնձ, գնձ, գրք, ձկ, լղ, ձռք:

3

ես	եզ	եղան	երեկ
տես	դեզ	սեղան	ցերեկ

Ինչպե՞ս է ե-ն հնչում առաջին տողի բառերում, ինչպե՞ս՝ երկրորդ: Ինչո՞ւ:

4 Գտի՛ր օրինաչափությունը և ի՛նքդ կազմի՛ր մի այդպիսի բառաշարք բնագրի բառերով.

ափ – 1	սիրելի – 3
արոտ – 2	ուսուցչուհի – 4

5 Բնագրից արտագրի՛ր մարդկանց անունները: Գծի՛ր դրանց տառային գծապատկերները: Ձայնավորները ներկի՛ր կանաչ գույնով, բաղաձայնները՝ կարմիր:

Օրինակ՝ Սեդա – ▭▭▭▭

6 Գրի՛ր նկարների և տառի անունները: Առաջին տառերով կարդա՛ մի բառ.

Ա

Երկրորդ տառերով կարդա՛ մեկ ուրիշ բառ:

ՉԱՐԱՃՃԻ Չ ՏԱՌԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Կաս

Չ տառը շատ չարաճճի է: Ասենք՝ տեսնում է, որ գրված է «Երեխաներ, լավ սովորեք» նախադասությունը: Իսկույն խցկվում է նախադասության մեջ ու կանգնում ս տառից առաջ: Ստացվում է. «Երեխաներ, լավ չսովորեք»: Նրա պատճառով ուտել-ը դառնում է չուտել, խմել-ը՝ չխմել, գնալ-ը՝ չգնալ և այլն: Սա բառերին դուր չի գալիս: Ու չ-ն մնում է մենակ: Մի քիչ խաղում է, մի քիչ աման-չաման կոտրում, ինչ կա-չկա՝ խառնում իրար:

Գնում կանգնում է հեռախոսի մոտ: Հենց մեկն ասում է. «Ալո՛, ալո՛», իսկույն թռչում է բառերի առաջ, և մյուս կողմում լսում են. «Չալո՛, Չալո՛»:

Հարցեր

1. Ինչո՞ւ բառերին դուր չեն գալիս չ-ի չարաճճիությունները:
2. Ինչ ես կարծում՝ չ-ն մենակ կմնա:
3. Պատմվածքի ո՞ր հատվածներն են պատկերված էջի նկարներում:

թռչել

1 Հետևյալ բառերը բաժանի՛ր երկու խմբի.
գնդակ, մատիտ, փուչիկ, խողովակ, խնձոր, քանոն:

2 Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը.
Մկրատը բե□: | Մտրակը տա□:
ծանր բե□ | այբուբենի տա□

3 Տետրում գրիր այնպիսի բառեր, որոնց մեջ չ տառը լինի առաջինը, երկրորդը, երրորդը:

4 Հորինի՛ր մի հանելուկ հեռախոսի մասին:

5 Գտի՛ր «ավելորդը».
վառիչ, սուլիչ, գրիչ, հաշվիչ, քամիչ, չմուշկ:
Այս բառերով կազմի՛ր նախադասություններ:

Գալիս է ձմեռը: Չ-ն ուզում է ձմեռելու տեղ գտնել: Ցրտից դողդողալով՝ մոտենում է մի ծառի: Տեսնում է, որ ծառը դուռ ունի, իսկ դռան վրա ցուցանակ է կախված՝ «Փակ է»: Ի՞նչ անի: Կանգնում է է տառից առաջ, ստացվում է. «Փակ չէ»: «Որ փակ չէ, բա ի՞նչ է»,– մտածում է չ-ն ու այս անգամ խցկվում Փ տառից հետո: «Փչա́կ* է»,– ուրախանում է չ տառը: Ու հենց այդ փչակում էլ մնում է ամբողջ ձմեռ: Իսկ թե հետո չ-ն ինչ տառերի հետ է ընկերանում ու բառեր կազմում, դո՛ւք ասեք:

Հարցեր

1. Չ-ն ինչպե՞ս փչակ սարքեց: Բեմականացրե՛ք:
2. Չ-ն ընկերացավ տառերի հետ: Դու ո՞ւմ հետ կուզենայիր ընկերանալ: Ինչո՞ւ:

ամ՛բողջ

1 Բառազույգ

Գտի՛ր՝ ո՛ր բառերն են «ընկերներ».
ափսե, ծով, կատու, գրիչ, նավ, ճաշ, երկինք, տետր, մլավոց, արև:
Օրինակ՝ արև – երկինք:

3 Շարունակի՛ր

Ի՞նչը կարող է սառը լինել՝ ձյունը, ջուրը, ...:
Ի՞նչը կարող է փափուկ լինել՝ բարձը, կոշիկը, ...:

2 Նկարներում պատկերված առարկաների անունները գրի՛ր տետրում:
Թվերի փոխարեն գրի՛ր անունների համապատասխան տառերը և կստանաս մի բառ:
Օրինակ՝ պետք է գրել ափսե բառի 2-րդ տառը՝ փ:



4 *Հանելուկ*

Գալիս է հուշիկ*,
Կարմիր են դառնում
Ականջ ու թուշիկ,
Մեծը մրսում է,
Փոքրը դրսում է:

5 Բնագրից կարդա այն նախադասությունները, որոնցում կա այս հանելուկի պատասխանը:

ՍՈՒՐԵՆՆ ՈՒ ԱՇՈՏԸ

Վաս

Սուրենն ու Աշոտը սովորում են երկրորդ դասարանում: Երբ ուզում են խաղալ, իրար ձայն են տալիս, դուրս են գալիս բակ:

Մի անգամ Աշոտը կանչեց.

– Սո՛ւրեն:

– Ի՞նչ:

– Ա՛րի՛ խա՛ղա՛նք:

– Չեմ գա՛լի՛ս:

– Ի՞նչո՛ւ:

– Դա՛սը դեռ չեմ սո՛վորել:

Հիմա տեսնենք, թե Աշոտը Սուրենին ինչու էր կանչում՝ Սու-րեն և ոչ թե՝ Ս-ուրեն կամ Սուր-են: Ասում էր՝ խա-ղանք և ոչ թե՝ խ-աղանք կամ խաղա-նք: Սուրենը պատասխանում էր՝ չեմ գա-լիս և ոչ թե՝ չեմ գ-ալիս կամ՝ չեմ գալ-իս:

Իսկապես, ինչո՞ւ ենք մենք հարցնում՝ ին-չո՞ւ և ոչ թե՝ ի-նչո՞ւ:

Որովհետև մենք այդպես էլ խոսում ենք: Բառերն արտասանում ենք մասերով, որոնք կոչվում են վանկեր. Սու-րեն, ա-րի, խա-ղանք: Բայց քանի որ արագ ենք խոսում, թվում է, թե վանկերը միացած են իրար:

Մենք նաև այդպես երգում ենք. «Տո-նա-ծա՛ռ ջան, տո-նա-ծա՛ռ, ինչ սի-րուն ես ու պայ-ծառ»:

1 Ողջո՛ւյն, ես վանկն եմ՝ ա - հա: Ինչպես հիշում ես, դու ինձ մի շնչով էիր արտասանում: Խաղա՛ այս խաղը:

2 **Վանկախաղ**

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և առանց վանկատելու գրի՛ր տետրում.

ա սա պա

խան ռույց տաս տամ

3 **ՎԱՆԿԻ ԵՐԳԸ**

Թե բառն ասես մասերով՝
Մա-սե-րով,
Ամեն մասում մի ձայնավոր՝
Ձայ-նա-վոր,
Դու կխոսես վանկերով՝
Վան-կե-րով:
Ամեն վանկը կարտասանես
Մի շնչով,
Մի շնչով:

4 Վանկերի բաժանի՛ր սոխակ, աշ-խատանք, պապիկ բառերը:

Տեսնո՞ւմ ես: Յուրաքանչյուր վանկն ունի մեկ ձայնավոր:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԳԼԽԱՐԿ՝ ՏԱՌԵՐԻՑ ՄԵԿԻ ԳԼԽԻՆ

Կաս

Սիրելի՛ երեխաներ: Դուք գիտեք, որ հայոց այբուբենը շատ հին ժամանակներում ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը: Նա է որոշել, որ հայերը պետք է գրեն ձախից աջ: Նա է սովորեցրել, որ բառերում լսվող բոլոր հնչյունները պետք է գրել:

Միայն մի ձայնավոր կար, որը Մաշտոցը չգրեց բառերի մեջ: Նրան մի անտեսանելի գլխարկ տվեց և ասաց.

– Քեզ կլսեն, բայց չեն տեսնի: Բառի մեջ գլխարկդ կդնես ու անտեսանելի կմնաս: Իսկ եթե բառի սկզբում լինես կամ վերջում, գլխարկդ կհանես, որ բոլորը քեզ տեսնեն:

Այդ ձայնավորն ը հնչյունն էր:

Հիմա գրում ենք՝ մկրատ, նկար: Ինչպես տեսնում եք՝ ը տառը գրված չէ, բայց ը հնչյունը լսվում է մ և ն հնչյուններից հետո: 18

վերջ, աջ

1

Վանկերի բաժանի՛ր գլխարկ, կրկես, սրբել, լսել, հնչյուն բառերը:

Վանկերի բաժանելիս անտեսանելի ը-ն գլխարկը հանում է ու երևում:

Օրինակ՝ գը-խարկ:

2 Վանկախաղ

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և առանց վանկատելու գրի՛ր տետրում.

նի տակ վը զե

տուր ըն թը կեր կը

3 Տառհանելուկ

Ինչն է, ինչը.
Ընձուղտի առջևում է,
9-ի վերջում:

4 Հետաքրքիր է

Վանկը կարող է կազմված լինել մեկ հնչյունից՝ ա, երկու հնչյունից՝ ակ, երեք հնչյունից՝ պար, չորս հնչյունից՝ պարկ, հինգ հնչյունից՝ պարտք:

Ինչպես տեսար, բոլոր վանկերը կարդացվում են մեկ շնչով, միանգամից:

Բնագրից ընտրի՛ր նման միավանկ բառեր և գրի՛ր տետրում:

Եկեք վանկ կազմենք, որ ը-ն հանի իր անտեսանելի գլխարկը և երևա. մը-կ-ռատ, նը-կար: Ը հնչյունի պատճառով բառի հնչյունների և տառերի քանակները կարող են իրար հավասար չլինել: Մկրատ բառն ունի 5 տառ, բայց 6 հնչյուն, նկար բառը՝ 4 տառ, 5 հնչյուն:

Եթե բառի մեջ մի քանի բաղաձայն կա՝ կողք կողքի գրված, ապա անտեսանելի ը-ն մեզ օգնում է, որ բառը հեշտ կարդանք: Փորձենք առանց ը հնչյունի արտասանել Մկրտիչ անունը: Տեսնում ենք, որ հնարավոր չէ: Այժմ վանկերի բաժանենք և անտեսանելի ը-ն գրենք՝ Մը-կը-տիչ: Արդեն հեշտ է արտասանելը: Ահա թե ինչու ը-ն ասում է.

– Լավ հիշեցեք ինձ: Ես անտեսանելի եմ, բայց անլսելի չեմ: Վանկեր կազմելիս և տողադարձ անելիս ես հանում եմ իմ անտեսանելի գլխարկը և երևում ձեզ:



օգնել, երևալ

Հարցեր

1. Ե՞րբ է անտեսանելի ը-ն դառնում տեսանելի:
2. Ինչո՞վ են տարբերվում հնչյունն ու տառը:

1 Տառհանելուկ

Ինձ լսում են, բայց չեն գրում,
Իբր ունեմ բարակ ձայն,
Սակայն առանց ինձ չի հնչում
Ոչ մի, ոչ մի բաղաձայն:

2 Կարդամ և սովորիր

Երկու բաղաձայնով սկսվող նկար, գրիչ բառերը մենք վանկերի բաժանեցինք այսպես՝ նը-կար, գը-րիչ:

Բաղաձայնների արանքում, անտեսանելի գլխարկը գլխին, մեզ ծանոթ ը-ն է: Նա առաջին բաղաձայնի հետ կազմում է մի վանկ: Երկրորդ բաղաձայնը գնում է հաջորդ վանկ:

Օրինակ՝ տղա – տը-ղա, Նվարդ – Նը-վարդ, սխալ – սը-խալ, գլուխ – գը-լուխ:

3 Հետաքրքիր է

Եկեք հաշվենք, թե քանի հնչյուն և քանի տառ կա եզր* բառի մեջ: Անտեսանելի ը-ն տեսնելու համար բառը բաժանենք վանկերի. ե-զը-ր: Գիտենք, որ ե տառը բառի սկզբում երկու հնչյունի նշան է՝ յե: Ուրեմն՝ տառերի թիվը 3 է, հնչյունների թիվը՝ 5:

Ընկերներիդ հետ դերային խաղով ներկայացրու առաջադրանքը:

ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Առաջին տառը

Հիշի՛ր այբուբենը, փոխի՛ր վաղ բառի առաջին տառը և ստացի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ քաղ, պաղ:

2 Նույնտառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

սրահ, սպա, թակ, սեպ:

Օրինակ՝ սեպ – պես:

3 Խառնագիր

Բառի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառը.

բռա, տկու, տկրո, ետկ:

Օրինակ՝ տկրո – կտոր:



4 Բառերի մասերը ճիշտ միացրու իրար: Ստացված բառերը գրի՛ր տետրում: Տեսա՞ր՝ վանկերը միացան, իմաստ ստացան ու բառեր դարձան:

5 Ենթադրենք՝ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է մկրատը: Այնպես նկարագրիր ու բացատրիր, որ հասկանա:

6 Ինչ վանկ է թաքնվել վանդակներում: Լրացրու տառերը և ստացված բառերը գրի՛ր տետրում:

7 Հետաքրքիր է

Ունենք մի եղան:

Ե-ն բառի սկզբում է, ու կարդում ենք յէ: Եկավ մի ս տառ ու կանգնեց եղան-ի սկզբում: Բառը դարձավ սեղան: Իսկ ե-ն սկսեց հնչել է:



8 Երկերեսանի ո-ն

Ունենք մի բառ՝ որս:

Ո-ն բառի սկզբում կարդում ենք վո: Եկավ չ տառը, կանգնեց որս-ի սկզբում: Բառը դարձավ չորս, իսկ ո-ն սկսեց հնչել օ:

ԻՄ ԴՊՐՈՑԸ ԵՎ ԳՐՔԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս բաժնի ո՞ր բնագիրը քեզ ամենաշատը դուր եկավ, ինչո՞ւ:

2. Թվի՛ր այս բաժնի՝ քեզ հանդիպած լեզվական խաղերը: Որո՞նք քեզ դուր եկան, ինչո՞ւ:

3. Ի՞նչ հանելուկներ սովորեցիր: Արտասանի՛ր մի քանիսը: Հորինի՛ր մի հանելուկ գրքի մասին:

4. Ի՞նչ սովորեցիր գրի և գրքի ստեղծման մասին: Պատմի՛ր:

5. Թվի՛ր ձայնավոր հնչյունները: Քանի՞ տառով են գրվում դրանք: Բե՛ր օրինակներ:

6. Ի՞նչ տարբերություն կա հնչյունի և տառի միջև: Հիշի՛ր հայերենի այբուբենը: Քանի՞ հնչյուն և քանի՞ տառ ունի մեր այբուբենը:

7. Հորինի՛ր երգեր «Ձայնավորների երգը», «Վանկի երգը» և «Հնչյունի երգը» քառատողերի բառերով:

8. Եթե քեզ հանձնարարվեր նկարազարդել այս բաժնի ստեղծագործություններից որևէ մեկը, ո՞րը կընտրեիր: Ինչո՞ւ: Ի՞նչ կնկարեիր. պատմի՛ր, ապա նկարի՛ր:

9. Ի՞նչ սովորեցիր ե և ո տառերի մասին: Պատմի՛ր:

10. Վերականգնի՛ր գաղտնագրված նախադասությունը.
Եչսե կենայբրեդաումեն եչմեն:

11. Ի՞նչ սովորեցիր վանկի մասին: Պատմի՛ր:

12. Ի՞նչ նոր վերնագիր կընտրեիր այս բաժնի համար:

13. Պատկերացրո՛ւ, որ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է գիրքը: Բացատրի՛ր նրան:

14. Ի՞նչ գիտես գրքի խնամքի մասին: Ի՞նչ պարտականություններ ունես դու:

15. Քո դասարանցիներից ո՞ւմ ես ամենաընթերցասերը համարում: Հիմնավորի՛ր ընտրությունդ:

				ա	ս		
				ա	յ	ու	ս	ա	կ
գ	ի			ք					
		ս		վ	ո	ր	ո	ղ	
ու	ս	ու		ի	չ				

16 Վանկախաղ

Բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր բառերը և առանց վանկատելու գրի՛ր տետրում:

Ո՞ր վանկը չօգտագործեցիր: Գրի՛ր մի բառ, որի մեջ լինի այդ վանկը:

դըպ, դա, աշ, գիրք, րոց, ղան, խարի, սա

17 Բառերն արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը: Ինչ բառ ստացար կարմիր այունակում:

ՈՍԿԵԾԱՄԻԿ ԱՇՈՒՆ

ԱՇՈՒՆ ՏԱՏԻԿԸ

Պատվական Խաչատրյան

Մոր պես բարի է
Աշուն տատիկը՝
Մեր հող ու ջրի
Ոսկեհատիկը:

Գիշեր ու ցերեկ
Շերեփը ձեռքին՝
Հյութ է բաժանում
Եվ բերք ու բարիք:

Բաժանում է նա
Գույներ արևոտ
Ու գույների հետ՝
Անուշ համ ու հոտ:

Տալիս է այդպես
Ամեն, ամեն ինչ,
Իսկ, այ, իր համար
Չի պահում ոչինչ:

Եվ դատարկ ձեռքով,
Գոհ ու սրտաբաց
Կանգնում է դաժան
Ցրտերի դիմաց:

ԱՇՈՒՆ

Հովհաննես Թումանյան

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի* հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը դեղին:
Տխուր հանդերից
Մարդն ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:

իջնել, մարդ

Հարցեր

1. Ինչպիսին է բնությունն աշնանը: Նկարագրիր ըստ բանաստեղծության:
2. Քո կարծիքով՝ ինչու՞ են տխուր հանդերը:
3. Ինչ գույներով կներկեիր աշունը: Նկարիր աշնանային մի տեսարան:

3 Պատկերացրու, որ հանդիպել ես մի մարդու, որը չգիտի, թե ինչ է աշունը: Այնպես նկարագրիր ու բացատրիր, որ հասկանա:

1

Կարդա՛ և հիշի՛ր

Բառերը լինում են միավանկ՝ աչք (1), և բազմավանկ՝ գլուխ (2), թագավոր (3), հուսահատվել (4), պարծենկոտություն (5) և այլն:

Բնագրից ընտրիր միավանկ և բազմավանկ բառեր:

4 Ո՞ր բառերը տարվա ո՛ր եղանակին են ավելի «հարազատ».

կանաչ, դեղին, սպիտակ, արևոտ, ձյուն, շոգ, անձրև, մշուշ, հալվել, վարել, լողալ, սառույց:



2

Նույնտառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

կում, առած, շիվ, վիճակ:

Օրինակ՝ վիճակ – կավիճ:

5 Ո՞ր բառերն են «ընկերներ»:

Բառազույգերը գրի՛ր տետրում:

Ապակի, ձմեռ, ալյուր, լուսամուտ, գիրք, հաց, տառ, ջուր, ձյուն, ձուկ:

Օրինակ՝ հաց – ալյուր:

ՏԵՐԵՎԱԹԱՓ

Հովհաննես Թումանյան

– Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,–
Ասաց քամին տերևներին,–
Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի*
Գույներ հագեք խայտաբղետ*
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկեք ինձ հետ, փախեք ինձ հետ…
Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու թևին թռան, փախան:

հագնել, թև

Հարց

Ինչ ես կարծում՝ տերևներն ինչո՞ւ էին տխուր երգեր սվսվում:

1 Նկարագրի՛ր տերևաթափը՝ օգտագործելով բանաստեղծության բառերը:

2 Հորինի՛ր մի երկխոսություն գարնան և աշնան տերևների միջև:

3 Պատմի՛ր «տերևի ճանապարհորդության» մասին:

4 Փոփոխի՛ր

Միավանկ բառերից ստացի՛ր բազմավանկ բառեր.

ծառ, հող, քար, մատ, լող:

Օրինակ՝ հող – հողակտոր, հողամաս, հողոտ:

5 Հետաքրքրաշարժ բառեր

կ□ր կ□ր կ□ր կ□ր

Ա, ե, ի, ո ձայնավորները հերթով տեղադրի՛ր վանդակներում և կստացաս նոր բառեր:

Այդ միավանկ բառերը դարձրո՛ւ բազմավանկ:

6 Տետրում գրի՛ր այս առարկաների անունները: Բաժանի՛ր վանկերի:



ԻՆՉՈՒ Է ՆՈՅԵՄԲԵՐԸ ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ

Նիկոլայ Սլադկով

Սարի հետևից դուրս եկավ մի ձյունաբեր ամպ, և անտառում ամեն ինչ իրար խառնվեց:

Սպիտակ նապաստակը տեսավ ու ճղճղաց.

– Շո՛ւտ արա, շո՛ւտ ձյուն տեղա: Ես վաղուց արդեն սպիտակ մորթիս եմ հագել, իսկ ձյուն չկա ու չկա:

Ամպը լսեց նապաստակին ու շարժվեց առաջ:

– Չի՛ կարելի, չի՛ կարելի, ա՛յ ամպ, հե՛տ դարձիր,– ճչաց հողագույն լորիկը:– Եթե գետինը ձյունով ծածկես, ես ի՞նչ պիտի ուտեմ: Իմ ոտիկները թույլ են, ինչպե՞ս ձյունոտ հողի մեջ քուջուջ անեմ: Համ էլ՝ սպիտակ ձյան վրա որսորդն ինձ կնկատի:

Ամպը զայրացած հետ դարձավ:

– Հե՛յ, ա՛մպ, առա՛ջ արի, ի՞նչ ես տեղում դոփում,– փնթփնթաց արջը:– Իմ որջը ծածկի՛ր ձյունով, քամուց ու բուքից պաշտպանի՛ր, օտար աչքից թաքցրո՛ւ:

25

հեպև, որզ

1 Վերընթերցի՛ր՝ ձյունաբեր ամպից ի՞նչ էին խնդրում.

ա. նապաստակը,
բ. լորիկը,
գ. արջը:

2 Բնագրից գտի՛ր անտեսանելի ը ունեցող բառեր և գրի՛ր տետրում:

3 Ինչպիսի՞ն է ամպը, ինչպիսի՞ն է անտառը.

ծաղկառատ, կարկտաբեր, անձրևաբեր, պտղաշատ, սպիտակ, ծառաշատ, սաղարթավոր, ձյունաբեր:

4 Մտածի՛ր, թե բառերն ինչու են գրված այս հերթականությամբ: Շարքը լրացրու՝ բնագրից ընտրելով բառերը.

ամպ, բուք, գայլ, ...:

5 Կարդա՛ և սովորի՛ր

Եթե բառն սկսվում է երեք բաղաձայնով, ապա վանկերի բաժանելիս, սովորաբար, առաջին և երկրորդ բաղաձայնների արանքում երևում է ը անտեսանելին՝ այդ բաղաձայնների հետ կազմելով մեկ վանկ: Իսկ երրորդ բաղաձայնը գնում է հաջորդ վանկ:

Օրինակ՝ թմբուկ – թը՛մ-բուկ, խնձոր – խը՛ն-ձոր, մրցանակ – մը՛ր-ցանակ:

Ամպը շարժվեց առաջ:

– Կանգնի՛ր, կանգնի՛ր,– ոռնացին գայլերը:– Եթե դաշտ ու անտառ ձյունով ծածկես, մենք չենք կարողանա արագ վազել: Իսկ եթե արագ չվազենք, սովից կկոտորվենք:

Ամպը մի քիչ մտածեց ու կանգ առավ:

Իսկ անտառից լսվում էին տարբեր ճիչեր ու գոռոցներ:

– Մեզ մո՛ռ արի, մեզ ձյունո՛վ ծածկի՛ր,– ամպին կանչում էին մի կողմից:

– Չհամարձակվե՛ս ձյուն տեղալ,– ոռնում էին մյուսները:– Հե՛տ դարձի՛ր:

Ամպը մեկ առաջ էր գնում, մեկ՝ հետ: Մեկ մի քիչ ձյուն էր տեղում, մեկ՝ դադարում:

Այդ պատճառով էլ նոյեմբերը խայտաբղետ է. մեկ անձրև է գալիս, մեկ ձյուն, մեկ սառնամանիք է, մեկ էլ տեսար՝ տաքացավ: Մի տեղ սպիտակ ձյուն է, մի տեղ՝ սև հող:

Ո՛չ ձմեռ է, ո՛չ աշուն:

ամպ

Հարցեր

1. Ինչ էր ուզում գայլը ձյունաբեր ամպից:
2. Անտառի բնակիչներն ինչո՞ւ էին տարբեր բաներ ցանկանում:
3. Եթե դո՛ւ հանդիպեիր ձյունաբեր ամպին՝ ինչ կասեիր նրան: Ստեղծի՛ր երկխոսություն:

1 ԲԱՌԻ ԵՐԳԸ

Ես խոսք եմ,
Ես հնչյունների
Իմաստուն հոսք եմ,
Ես ամեն ինչի
Անունն եմ անտես,

Իսկ թե ինձ գրես՝
Բառ կդառնամ ես,
Ո՞ւ դու կտեսնես,
Որ իմաստ ունեմ,
Եվ ձևեր պես-պես:

2 Առաջին տառը

Հիշելով այբուբենը՝ փոխի՛ր ջուր բառի առաջին տառը և ստացի՛ր նոր բառեր:
Օրինակ՝ դուր, հուր:

3 Կարդա՛ և հիշի՛ր

Երկու ձայնավորների միջև եղած 2, 3 բաղաձայններից, սովորաբար, հաջորդ վանկ է գնում մեկը:
Օրինակ՝ բարձ-րանալ:

4 Շարունակի՛ր և գտի՛ր ընդհանուր անվանումը

Աթոռ, բազմոց, ...:
Տետր, մատիտ, ...:
Շուն, կատու, ...:
Տանձ, սալոր, ...:

ԱՇՈՒՆ

Գրիգոր Եղիկյան

Աշունը եկավ ալ* կապած,
Ոսկենկար շալ կապած,
Մրգով լցրած ծոց ու բուռ,
Եկավ, ընկավ դռնեդուռ:
Ձայնեց Սոսին, Սաթիկին.
– Օգնեք,– ասաց,– տատիկին,
Թուլացել են ձեռքերս,
Շատ են ծանր մրգերս,
Ուսիս բեռը ցած բերեք,
Ինչքան կուզեք՝ հա՛ կերեք:
Ունեմ խնձոր կարմրաթուշ,
Տանձ, սերկևիլ, դեղձ ու նուշ,
Ընկույզ, կաղին ու փշատ.
Ամեն ինչն էլ՝ լի ու շատ,
Բա խաղո՛ղը, խաղո՛ղը,
Ափսոս, քի՛չ է քաղողը,
Եկեք, եկեք, ինձ օգնեք,
Շատվոր լինենք, չհոգնենք:

Հարցեր

1. Ինչպե՞ս եկավ աշունը: Նկարագրի՛ր:
2. Ո՞նչ խնդրեց աշուն տատիկը երեխաներից: Ինչո՞ւ:
3. Ո՞նչ ես կարծում՝ ովքե՞ր են օգնում աշուն տատիկին:

1 Բառերն արտագրի՛ր սյունակով: Յուրաքանչյուր բառի կողքին գրի՛ր իմաստով համապատասխան առարկայի անունը:

կանաչ
բրդոտ
հետաքրքիր
երեք
համեղ



Ինչպես նկատեցիր՝ դու ստացար բառակապակցություններ:

Մրգ, դեղձ, սերկևիլ

2 Կարդա՛ և սովորի՛ր

Կարմրաթուշ խնձոր բառակապակցության մեջ կարմրաթուշ բառը ցույց է տալիս, թե ինչպիսին է խնձորը, ինչ հատկանիշ ունի նա:

3 Ընդհանուր անվանումը

Ծաղիկ – մեխակ, ...:
Միրգ – տանձ, ...:

4 Ինչպիսի՞ն կարող են լինել բնագրում նշված մրգերը: Գրի՛ր տետրում:

ԱՄԻՍՆԵՐ ԵՎ ՉՈՐՍ ԵՂԱՆԱԿ

Ղազարոս Աղայան

Մարտը տալիս է ձնծաղիկ,
Ապրիլը՝ կապույտ մանուշակ,
Մայիսին բացվում է վարդը,
Սոխակը երգում անուշակ*:

Հունիսը մեզ խոտ է տալիս,
Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,
Օգոստոսը՝ տանձ ու խնձոր
Եվ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
Խաղողներ տեսակ-տեսակ,
Հոկտեմբերը՝ կարմիր գինի,
Նոյեմբերը՝ բողկ ու տակ*:

Դեկտեմբերին ձյուն է գալիս,
Հունվարին՝ ծածկվում սար ու ձոր,
Փետրվարին սկսվում է
Փոփոխակի* ցուրտ ու տաք օր:

բողկ

Հարցեր

1. Ո՞ր բառատողը տարվա ո՛ր եղանակն է ներկայացնում:
2. Ո՞ր բառատողը բեզ դուր եկավ: Շարունակի՛ր նկարագրել այդ եղանակը:

1 Տետրում գրի՛ր, թե ինչեր են պատկերված: Առանձնացրու երկու խմբով:

2 Բնագրից արտագրի՛ր ամիսների անունները՝ սկսելով հունվարից:

3 Ինչպիսի՞ն է ամառը: Ինչպիսի՞ն է ձմեռը: Բառակապակցությունները գրի՛ր տետրում:

Շոգ, ցուրտ, ձյունոտ, մըրգառատ, կանաչ, սպիտակ:

4 Ինչպիսի՞ն է աշունը: Ինչպիսի՞ն է գարունը: Բառակապակցությունները գրի՛ր տետրում:

Ծաղկառատ, դեղին, անձրևոտ, մշուշոտ, կանաչ, արևոտ:

ԻՆՉՊԵՍ ԲԱՌԵՐԸ ԳԵՏՆ ԱՆՑԱՆ

Վաս

Մի օր «Եկեք բարձրանանք սարը» նախադասությունը նստեց մի գնացք ու հասավ մինչև գետը: Նա ուզում էր սարի կատարից դիտել արևածագը: Գետի մյուս ափը նա պիտի նավակով անցներ: Նավապետ Թզուկն ասաց.

– Իմ նավակը շատ փոքրիկ է. միանգամից միայն մեկ վանկ կարող է տեղափոխել: Ա՛յ նախադասություն, դու չես տեղավորվի:

Նախադասությունն ասաց.

– Իմ սիրելի՛ բառեր, արագ-արագ բաժանվեք վանկերի, որ կարողանանք անցնել մյուս ափը:

«Եկեք» բառն անմիջապես բաժանվեց երկու վանկի՝ ե-կեք, ու վանկ առ վանկ անցավ մյուս ափը: «Բարձրանանք» բառը չգիտեր՝ ինչպես բաժանվի վանկերի, իրար էր խառնվել:

Սիրելի՛ երեխաներ, եկեք օգնենք նրան. չէ՞ որ մենք արդեն գիտենք, թե բառերն ինչպես պետք է բաժանել վանկերի՝ բարձ-րա-նանք:

Այս մի բառն էլ վանկ առ վանկ գետն անցավ: «Սարը» բառն ավելի հեշտ բաժանվեց վանկերի ու անցավ: 29

1

Խառնագիր

Բառի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառը:

Թուզկ, րսա, ետգ, նկվա, եխարե, վկաան, ագցնք:

Միանգամից

2

Հետաքրքիր է

Վազորդուհիները շտապ մոտեցան մրցավարին:

Ինչպես տեսնում ես, վազորդուհիները բառի մեջ կան բոլոր ձայնավոր հնչյունները:

Հետաքրքրաշարժ է նաև հեծանվորդուհի բառը: Որոշի՛ր՝ բոլո՞ր ձայնավորները կան այս բառում:

3

Վանկախաղ

Նախադասության բառերի վանկերը խառնվել են: Վերականգնի՛ր նախադասությունը:

կեք բարձ սա

նանք Ե որը: րա



Մյուս ափին վանկերը նորից իրար միացան ու դարձան բառեր, բառերն էլ իրար միացան ու դարձան նախադասություն և ուրախ-ուրախ սկսեցին բարձրանալ սարը:

Սիրելի՛ երեխաներ: Իսկ դո՞ւք ինչպես եք բառերը գետի մյուս ափն անցկացնելու: Չէ՞ որ տետրի լուսանցքի գիծը նման մի գետ է: Երբ հասնում եք լուսանցքի գծին, բայց բառը դեռ չի վերջացել, ի՞նչ եք անում: Իհարկե՝ տո-ղադարձ:

Իսկ ինչպե՞ս ճիշտ տողադարձ անենք: Դրա համար բառը նախ մտքում բաժանենք վանկերի:

Տեսնենք, թե քանի վանկ կտեղավորվի մինչև լուսանցքի գիծը: Հետո գծիկ դնենք: Իսկ մնացած վանկը կամ վանկերը տեղափոխենք հաջորդ տող:

Չմոռանաք նաև անտեսանելի գլխարկ դրած ը-ին: Չէ՞ որ նա վանկ կազմելիս հանում է իր գլխարկն ու առոք-փառոք* տեղ գրավում վանկեր տեղափոխող նավակում:

Հարցեր

1. Ինչո՞ւ նախադասության բառերը բաժանվեցին վանկերի:
2. Դու ինչպե՞ս ես տողադարձ անում:

բարշրանալ

1 Հանելուկ

Բաժանում եմ բառը ես,
Կեսը տանում հաջորդ տող,
Որ ինձ դու ճիշտ կատարես,
Բառը պիտի վանկատես:

☺ Խնդուկ

– Արա՛, այս մի տառն ինչո՞ւ ես տողադարձ արել:

– Իսկ ինչ անեի. թղթից արդեն ցած էր ընկնում:

2 Բնագրից ընտրի՛ր եռավանկ, քառավանկ, հնգավանկ մեկական բառ և տողադարձի՛ր բոլոր հնարավոր ձևերով:

3 Հիշո՞ւմ ես, որ և-ը երկու կամ երեք հնչյունի նշան է:

Արև, տերև, բարև (էվ) – 2 հնչյուն:

Նաև, աս (յէվ) – 3 հնչյուն:

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ* ԱՆՏԱՌՈՒՄ

Ըստ Լեդա Միլևայի

Աշունը մտավ սոսիների* անտառն ու ներկեց բոլոր տերևները: Անտառը դեղին, կարմիր, ծիրանի վառ զգեստներ հագավ:

Ամռանը քուն մտած հովերը զարթնեցին: Վերցրին իրենց սրինգներն ու նվագեցին: Տերևներն ուրախությունից ծափ տվեցին և պարեցի՛ն, պարեցի՛ն…

Սրինգների նվագն աշխույժ էր ու զրնգուն: Նուրբ ու բարակ կոթերով տերևները հեշտությամբ պոկվեցին ու հովերի հետ թռչկոտեցին:

31

Հարցեր

1. Ինչ զգեստներ նվիրեց աշունը ծառերին:
2. Տերևներն ինչո՞ւ սկսեցին պարել:

գարթնել

1 Վանկերի բաժանի՛ր հետևյալ բառերը.

սրինգ, տերև, զարթնել, նվագ, մասրենի:

Հիշի՛ր անտեսանելի գլխարկով ը-ին:

2 Հետաքրքիր է, որ և-ը կարող է դառնալ մեկ լրիվ վանկ:

Օրինակ՝ նա-և:

Գիտե՞ս՝ և-ը նաև բառ է:

Օրինակ՝ ես և դու:

3 Քանի՞ տառ և քանի՞ հնչյուն ունեն հետևյալ բառերը.

երևալ, արև, Երևան, Սևան, նաև, հարևան:

Օրինակ՝ երևալ բառի տառերն են՝ ե, ր, և, ա, լ – 5 տառ, հնչյուններն են՝ յ, է, ր, է, վ, ա, լ – 7 հնչյուն:

ԵՒ-Ի ԵՐԳԸ

Ծանոթանանք՝ և-ն եմ ես,
Ինձ տառի տեղ չդնես,
Ես նշան եմ պարզապես,
Նաև բառ եմ տառի պես:
Բառամիջում, բառավերջում՝
Ընդամենը՝ երկու հնչյուն,
Իսկ թե գնամ ես առջևից,
Կամ էլ մնամ մեն-մենակ,
Ինչ եք ուզում էլ և-ից.
Երեք հնչյուն կդառնամ:
Իսկ թե բախտս շատ չբերի,
Ու տողադարձ անելիս
Նշանն ուղիղ վրաս ընկնի,
Կբաժանվեմ երկու մասի:

– Մենք հիմա ինչ անենք,– հարցրին տերևները:

– Դրմ, դրմ, դրմ, դրմ,– պատասխանեցին հովերն իրենց սրինգներով:– Չհասկացանք: Այսօր մեր պարահանդեսն է լինելու: Տեսեք, ուռենիներն արդեն ոսկեզօծել* են իրենց մազերը: Այն ջահել կաղնին հագել է կարմիր զգեստը: Նույնիսկ մասրենին հասցրել է զարդարվել:

Գնանք, պարահանդես է, գնանք:

Այդպես նվագում էին հովերը:
Իսկ տերևները՝
Կեչու վառ տերևները,
Պտտվում էին, հա՛ պտտվում,
Պարում էին
Ու թռչկոտում:
Ո՞վ կարող էր նրանց կանգնեցնել.
Չէ՞ որ պարահանդեսի էին հրավիրված:

այսօր, ոսկեզօծ

Հարցեր

1. Պատկերացրո՛ւ, թե հայտնվել ես անտառում, տեսել տերևների պարահանդեսը: Ինչ կպատմես:
2. Շարունակի՛ր՝ ինչ պատահեց պարահանդեսում:

1 Նախադասություններն արտագրի՛ր տետրում՝ պահպանելով բառերի տողադարձված ձևերը:

2 Կարդա՛ և սովորի՛ր

Տողադարձելիս բառամիջի և-ը բաժանվում է երկու բաղադրիչների՝ ե, վ: Իսկ եթե տողադարձն ուրիշ տեղից է արվում, նա մնում է և:

Օրինակ՝ հարե-վան, հա-րևան, Երե-վան, Ե-րևան, տերե-վաթափ, տերևա-թափ:

Լավ հարե-
վանը ոսկի է:
Լավ հա-
րևանը ոսկի է:

Մայրաքաղաք Երե-
վանը գեղեցիկ է:
Մայրաքաղաք Ե-
րևանը գեղեցիկ է:

Հիրդեն տերե-
վաթափ է:
Հիրդեն տերևա-
թափ է:

ՈՍԿԵԾԱՄԻԿ ԱՇՈՒՆ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Աշնան պատկերը նկարելու համար ինչ գույներ կընտրես:

Աշուն եկավ, սիրուն աշուն,
Ոսկի փռեց այգում, դաշտում:
Տերևի հետ պարեց քամին,
Մշուշ* պատեց հանդ ու սարին:

Երկինքը լուռ արցունք թափեց,
Գետը տխուր երգեր երգեց,
Իսկ ծառերը, որ լսեցին,
Ուրախ ձայնով խշխշացին:

2. Քառատողերն ընթերցելիս ինչ տեսար, ինչ լսեցիր և ինչ զգացիր: Նկարագրիր և նկարազարդիր:
3. Տողադարձի մասին որ ստեղծագործության մեջ կարդացիր: Ինչ իմացար, բացատրիր:
4. Շրջապատի բնությունը դիտելով՝ ինչպես ես զգում, որ աշուն է:
5. Ինչ հոգսեր է բերում աշունը թռչուններին ու անտառի մյուս բնակիչներին:
6. Ինչ նոր վերնագիր կառաջարկեիր այս բաժնի համար:
7. Նկարիր մի աշնանային տեսարան: Պատմիր նկարի բովանդակությունը:
8. Մտքում լրացրու խաչբառը: Ստացված բառով կազմիր բառակապակցություններ:
9. Հորինիր մի պատմություն շաղգամի աշնանային բերքահավաքի մասին:

		ո	ր	ս		ր	դ
			ս	վ		վ	ա	լ
			ո	ս		ե	զ	օ	ծ
				տ		ր	և
			ծ	ա		կ	ե	լ
պ	ա	ր	ա	հ		ն	դ	ե	ս
				ա		պ
		դ	ե	ղ		ն
		ն	ե	ր		ե	լ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է

ՀԱՆԵԼՈՒԿ

Մի արտ ունենք,
Քաղեցինք,
Խուրձ* արեցինք,
Արտը գնաց,
Խուրձը մնաց:

ԴԱՐՁՎԱԾՔ

Հինգ մատի պես գիտենալ

ՀԵՔԻԱԹ

Լինում է, չի լինում՝ երկու աղջիկ: Նրանք մթերքով լի պայուսակներով գնում են կախարդական անտառով: Մոտենում է մի տատիկ ու ասում.

– Մի քիչ ուտելիք կտա՞ք, սոված եմ:

Աղջիկներից մեկն ասում է, եթե մեր վեճը լուծես, ասես, թե մեզանից ով է գեղեցիկ, ուտելիք կստանաս:

– Լավ,– ասում է տատիկը,– կասեմ:

Մյուս աղջիկը, առանց պատասխանի սպասելու, ուտելիք է տալիս: Տատիկն ասում է.

– Գեղեցիկը նա է, ով բարի գտնվեց:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Ծտի ճուտը ծառի ճյուղին,
Ծտի ճտի ճիտը*՝ ծուռ:

ԽՆԴՈՒԿ

– Այդ ի՞նչ ես անում:
– Բարձրանում եմ ծառը՝ խնձոր ուտեմ:
– Բայց դա ընկուզենի է:
– Ոչի՛նչ, խնձորը գրպանումս է:

ԽԱՂԻԿ-ՏԱՂԻԿ*

Չալ* տոտիկ, խալ* տոտիկ,
Գառնուկ ունեմ խատուտիկ*:

Չալ տոտիկ, խալ տոտիկ,
Ելանք սարերը մոտիկ:

Չալ տոտիկ, խալ տոտիկ,
Ես էլ, գառնուկս էլ՝ պստիկ:

ԱՌԱԾ

Ուս ուսի որ տանք,
Սարեր շուռ կտանք:

ԵՐԵՔ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀԵՔԻԱԹԸ
ՀԱՆԵԼՈՒԿ, ԴԱՐՁՎԱԾՔ

Վաս

Մի գյուղացի վար անելիս մի կարաս* է գտնում: Կարասի բերանը բացում է թե չէ՝ միջից մի թզուկ է դուրս գալիս ու զայրացած ասում.

– Դու իմ կարասի բերանը բացեցիր՝ մեջը լույս լցվեց, քունս թողեց փախավ: Հիմա մի բան ասեմ քեզ, բերանդ ջուր չառնես, նստես: Քունս հետ բերելու համար քեզ հանելուկներ պիտի ասեմ: Թե չգտար՝ իմ քունը կմտնի քո մեջ, և դու ամբողջ կյանքում քնած կմնաս: Թե գտար՝ էս կարասով մեկ ոսկի կտամ քեզ:

– Լավ,– համաձայնում է գյուղացին:

– Ինչն է, ինչը.
Ինչքան լցնես՝ կփոքրանա,
Ինչքան վերցնես՝ կմեծանա:

35

Հարցեր

1. Ինչու՞ էր զայրացած թզուկը:
2. Ինչ պայման առաջադրեց թզուկը գյուղացուն:
3. Ինչպե՞ս ես հասկանում թզուկի ասածը. «Բերանդ ջուր չառնես, նստես»:

3 Տեքստի ո՞ր տողերին է վերաբերում նկարը: Արտագրի՛ր այդ տողերը:

1 Վանկերի բաժանի՛ր սոխակ, աշխատանք, պապիկ բառերը:
Տեսնում ես: Յուրաքանչյուր վանկն ունի մեկ ձայնավոր:

2 Կռահի՛ր, թե ինչ է գաղտնագրված.
Վոսեկենու կենայբրեայբսե:

4 Կարդա՛ և հիշի՛ր
Ինչ (ինչե՞ր), ո՞վ (ովքե՞ր) հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս առարկա:
Օրինակ՝ ի՞նչ – կարաս (ինչե՞ր – կարասներ), ո՞վ – գյուղացի (ովքե՞ր – գյուղացիներ):

Գյուղացին իրենց գյուղում շատ ջրհորեր*, մթերքը պահելու համար հորեր* էր փորել: Նա հինգ մատի պես գիտեր, որ ջրհորը, հորը, փոսը եթե լցնես՝ կփոքրանան, եթե միջից վերցնես՝ կմեծանան: Այդպես էլ պատասխանեց թզուկին:

Թզուկը տեսավ, որ գյուղացին ճիշտ գտավ հանելուկի պատասխանը, մորուքից մի մազ պոկեց, խփեց կարասին: Կարասը լիքը լցվեց ոսկով:

Հարցեր

1. Թզուկն ինչպես կատարեց իր խոստումը:
2. Ինչ ես կարծում՝ գյուղացին ինչ կանի ոսկով լի կարասը: Իսկ դու ինչ կանեիր:

1 Պատասխանը հարցի մեջ

Ո՞Ի՞ր էր գնում գյուղացին:
Գյուղում ինչ կար:
Ինչ էր անում, որ գոտին երկարում էր:
Ո՞վ տեսավ թզուկին:
Ջրհորն ինչ է:

3 Շարունակիր

բացել – փակել
լույս – ....
երկարել – ....
հաստանալ – ....
թզուկ – ....

2 *Հանելուկ*

Կարաս ունեմ
Մի պուճուր,
Մեջը՝ երկու
Գույնի ջուր:

ԴԱՐՁՎԱԾՔ

Բերանը ջուր առնել – լուռ մնալ, ոչ մի բառ չասել, չխոսել:



4 *Հանելուկ*

Կա մի հսկա կենդանի,
Որքան բարձես՝ կտանի.
Նրա քիթը կախ է միշտ,
Գուցե նա՞ էլ ունի վիշտ:

ԴԱՐՁՎԱԾՔ

Հինգ մատի պես գիտենալ – շատ լավ իմանալ, ամբողջապես ճանաչել:

ԱՌԱԾ, ԴԱՐՁՎԱԾՔ

Գյուղացին մի կարաս ոսկի գտավ ու աշխարհով մեկ եղավ: Մտքում ասաց. «Ում որ առաջինը տեսնեմ, ոսկու կեսը նրան կտամ»:

Այդ պահին թագավորի նազիրն* անցնում էր արտի մոտով: Գյուղացին նրան առաջարկեց ոսկու կեսը: Նազիրը, աքլորանալով, ասաց.

– Մեր թագավորության մեջ ես գտել ոսկին, ուրեմն այն մերն է:

Եվ, ամբողջ ոսկին վերցնելով, հեռացավ:

Գյուղացին տխուր-տրտում եկավ տուն և ամեն ինչ պատմեց կնոջն ու երեք աղջիկներին՝ Աննմանին, Անուշին, Աստղիկին:

Աղջիկներն ասացին.

– Մի՛ վշտացիր, մենք կգնանք, ոսկին հետ կբերենք. ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

Հարցեր

1. Գյուղացին ինչո՞ւ նազիրին առաջարկեց ոսկու կեսը:
2. Ճի՞շտ վարվեց նազիրը: Մեկնաբանի՛ր:
3. Աղջիկներն ինչո՞ւ էին համոզված, որ ոսկին հետ կբերեն:

2 Ո՞վ (ովքե՞ր) հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս անձ:

Օրինակ՝ ո՞վ – աղջիկ (ովքե՞ր – աղջիկներ):

1 ԱՌԱԾ

Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

Ովքեր միասնական են, համախմբված, մի նպատակի շուրջ միավորված, ամեն ինչ կարող են անել:

3 ԴԱՐՁՎԱԾՔ

Աշխարհով մեկ լինել – շատ ուրախանալ, աշխարհի տեր զգալ իրեն:

4 Հիշի՛ր մի դեպք, երբ դու աշխարհով մեկ ես եղել: Գրի՛ր տետրում:

ՏԱՂԻԿ-ԽԱՂԻԿ

Քույրերը գնում են թագավորի պալատ: Ավագ քույրն ասում է.

– Եկել ենք պալատ՝ ձեզ ծառայելու:

Թագավորը հարցնում է.

– Անունդ ինչ է:

– Նման,– ասում է Աննմանը:

– Ինչ էլ աննման անուն է: Իսկ ինչ գիտես:

– Կարող եմ երգել, տաղիկներ ու խաղիկներ ասել:

– Դե ասա՛, լսենք:

Նմանն սկսում է երգել.

Յուռին գնաց բանջարի*,
Բանջար չեղավ, խոտ եղավ,
Խոտի տակին ծիտ եղավ,
Ճլվլալով դուրս թռավ:
Ծիտը թռավ գերանին՝
Կանաչ խոտը բերանին:

Թագավորը հավանում է Նմանին և նազիրին հրամայում է, որ աղջկան դարձնի թագավորի ավագ աղջկա դայակը*:

ավագ

Հարցեր

1. Աղջիկներն ինչ ասացին թագավորին: Իրականում նրանք ինչո՞ւ էին եկել:
2. Ինչ էր ավագ աղջկա անունը և ինչ կարող էր նա անել:
3. Դու իմացար ավագ աղջկա տարօրինակ անունը: Ինչ ես կարծում՝ ինչ անունով կներկայանա Անուշը:

2 Ինչ (ինչեր) հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս իր: Օրինակ՝ ինչ – փոս (ինչեր – փոսեր):

3 Շարունակիր և գրիր տետրում.
ֆույր – ով
թագավոր – ....
աղջիկներ – ....
կարագ – ....
երգեր – ....
պալատ – ....
դայակ – ....

1 Տեքստի որ տողերին է վերաբերում նկարը:
Արտագրիր այդ տողերը:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ, ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Թագավորը միջնեկ աղջկան հարցնում է.

– Քո անունն ինչ է:

– Ուրիշ,– ասում է Անուշը:

«Էս ի՜նչ տարօրինակ անուն է. եփած հավի ծիծաղ կգա»,– մտածում է թագավորը և ասում.

– Դռի՛ ինչ կարող ես անել:

– Ես կարող եմ սուտասելուկ ասել:

– Սուտասելուկն ինչ է: Տես, հա՛. ստի ոտքերը կարճ են:

– Հիմա ասեմ.

Ես ունեմ մի հայելի,
Արմանք-զարմանք նայելի,
Երբ նայում եմ ես նրան,
Գլխիվայր է ամեն բան.
Պիտի կանգնեմ գլխի վրա,
Որ ամեն բան իր տեղը գա:

– Շա՛տ լավ սուտասելուկ էր: Պարզվում է՝ իմ թագավորության մեջ իմ նազիրից ավելի լավ սուտ ասող էլ կա: (Թագավորն արդեն գիտեր, որ նազիրը ոսկին խլել է գյուղացուց և իրեն ոչինչ չի ասել:) Լա՛վ, դու էլ կդառնաս իմ միջնեկ աղջկա դայակը:

տարօրինակ, արդեն

Հարցեր

1. Ինչ անունով ներկայացավ միջնեկ աղջիկը և ինչ կարող էր անել նա:
2. Ինչպե՞ս ես հասկանում «Ստի ոտքերը կարճ են» առածը:

1 Ինչ տարբերություն ես նկատում ստի և սուտասելուկի միջև:

2 ԴԱՐՁՎԱԾՔ

Եփած հավի ծիծաղ կգա – ասում են այն ժամանակ, երբ մեկն անմիտ բաներ է ասում կամ անում:

3 Հորինիր մի այնպիսի սուտ, որ «եփած հավի ծիծաղը գա», և գրի՛ր տետրում:

4 Շուտասելուկ

Այծին այցի գնաց ձին,
Առանց ձիու մնաց Արծվին:

Արտագրի՛ր շուտասելուկը՝ բառերը բաժանելով վանկերի:

5 ԿԵՍ ԿԱՏԱԿ, ԿԵՍ ԼՈՒՐՋ

Սուտ խոսելը լավ բան չէ,
Եթե սուտը կատակ չէ:
Ճիշտը պետք է ճանաչել,
Ճիշտ խոսել ու չամաչել:

ՕՐՈՐ ԵՎ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

– Քո անունն ինչ է,– հարցնում է թագավորը փոքր աղջկան:

– Տեսա,– պատասխանում է Աստղիկը:

– Դո՛ւ ինչ կարող ես անել:

– Ես կարող եմ օրորոցային երգել:

– Լա՛վ, դու էլ կդառնաս իմ փոքր աղջկա դայակը:

Աղջիկներն սկսում են ապրել պալատում: Թագավորի ամենափոքր աղջկա համար գյուղացու փոքր աղջիկն օրորոցային է երգում.

Օրո՛ր, օրո՛ր, իմ սիրունիկ,
Օրոր ասեմ, դու՝ նանա,
Երկար ապրես կարմիր օրեր,
Կարմիր արև ունենաս,
Օրո՛ր, օրո՛ր, իմ անուշիկ,
Օրոր ասեմ, դու՝ նանա,
Ալ վարդ դառնան քարն ու փուշը,
Որ ճամփով էլ դու գնաս,
Օրո՛ր, օրո՛ր, իմ անուշիկ,
Օրոր ասեմ, դու՝ նանա:

փորձել

2 Բնագրից ընտրիր և գրիր ո՞վ (ովքե՞ր), ի՞նչ (ինչե՞ր) հարցերին պատասխանող բառերը:

Հարցեր

1. Ինչ անունով ներկայացավ փոքր աղջիկը և ինչ կարող էր նա անել:
2. Գուշակի՛ր՝ ինչ էին անելու աղջիկները պալատում:

1 Հարցրո՛ւ մայրիկին և գրի՛ր, թե ինչ օրորոցային է երգել քեզ համար:

3 Սղոցը առարկա է:

Սղոցելը այդ առարկայով կատարվող գործողությունն է:

4 Ո՞ր բառերն են «ընկերներ»:

Գտի՛ր և գրի՛ր տետրում:

Բուրավետ, համեղ, հզոր, կապույտ, բանակ, երկինք, ծաղիկ, միրգ:

ԽՆԴՈՒԿ - ԽՆԴՄՆԴՈՒԿ

Միջնեկ քույրը զվարճալի պատմություններ, հեքիաթներ, խնդուկներ էր պատմում թագավորի միջնեկ աղջկան:

– Էլի՛ խնդուկ պատմիր,– խնդրում էր թագավորի աղջիկը:

«Շոգ ամառ էր,– պատմում է գյուղացու աղջիկը:– Նստած էինք գետի ափին: Հանկարծ մեր փոքրիկ քույրիկը բղավեց.

– Խեղդվո՛ւմ եմ, խեղդվո՛ւմ եմ:

Բոլորս վազեցինք նրա մոտ: Նա նստած էր գետի ափին՝ ոտքերը ջրի մեջ:

– Ո՞ւր է որ խեղդվում ես,– զարմացանք մենք:

– Ես չեմ խեղդվում, ոտքերս են խեղդվում»:

Հարցեր

1. Ինչ խնդուկ պատմեց միջնեկ քույրը:
2. Կարող ես հիշել մի զվարճալի դեպք քո կյանքից: Պատմի՛ր:

1 Վանկախաղ

Ասա մարդկանց այնպիսի՛ անուններ, որոնք սկսվում են հետևյալ վանկերով.

Մա, Նու, Գա, Լու, Նա:

Օրինակ՝ Մա – Մանուկ, Մանե, Մանուշակ:

2 Կարդա՛ և սովորի՛ր

Գոռ Հայկի Գևորգյանը սովորում է Նիկոլ Աղբալյանի անվան դպրոցում:

Ինչ ենք տեսնում:

Մարդկանց անունները, հայրանունները և ազգանունները գրվում են մեծատառով:

Նույն ձևով գրի՛ր քո մասին:

☺ Խնդուկ

Փոքրիկը բալ է ուտում, կորիզները գցում գետնին:

– Աղջի՛կ ջան, կորիզները չի՛ կարելի գետնին գցել:

– Մա՛մ, բա կնե՞լ տամ:

3 ա. Գտի՛ր «ավելորդը»

վարդ թռչունաձև ձմերուկ շուշան

մեխակ մանուշակ հիրիկ երիցուկ

բ. Ո՞ր ծաղկանունները կարող են դառնալ մարդկանց անուններ: Գրի՛ր:

ԲԱՌԱԽԱՂ, ՀԱՇՎԵԼՈՒԿ

Գյուղացու մեծ աղջիկն ու թագավորի մեծ աղջիկը՝ Անին, ընկերներ են դառնում: Իրար հետ պահմտոցի, յոթ քար, քարկտիկ են խաղում, պարանով ցատկում ու հաշվում.

Տո՛ւն, տո՛ւն,
Երկու տո՛ւն,
Երկու տանը՝
Երկու շո՛ւն,
Երկու շանը՝
Երկու բո՛ւյն,
Երկո՛ւ բնին՝
Երկու դո՛ւռ,
Մեկը՝ ուղիղ,
Մեկը՝ ծուռ:

Հենց հոգնում են՝ բառախաղեր են խաղում: Գյուղացու աղջիկը, մատը տնկելով, ասում է, Անին պատասխանում է:

– Ասա՝ մատ, Անի՛:
– Մատանի:
– Ասա՝ պատ, Անի՛:
– Պատանի:
– Ասա՝ նազ, Անի՛:
– Նազանի:

Անցնում է որոշ ժամանակ:

Աղջիկները, ապրելով պալատում, իմանում են, թե նազիրը որտեղ է թաքցնում իրենց ոսկին: Ու որոշում են՝ այսօրվա գործը վաղվան չթողնել: Հենց այդ գիշեր նրանք շատ գինի են խմեցնում նազիրին, քնեցնում են, մորուքի կեսը սափրում, գլխի մազերի կեսը սափրում, մի հոնքը սափրում, մի բեղը սափրում, ոսկին վերցնում ու գնում են իրենց տուն:

Հարցեր

1. Գյուղացու մեծ աղջիկն ո՞ւմ հետ ընկերացավ, և ի՞նչ էին անում նրանք միասին:
2. Ի՞նչ որոշեցին աղջիկները և ինչպե՞ս վարվեցին նազիրի հետ:
3. Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչ կանի նազիրն արթնանալուց հետո:

1 ԱՍԱՑՎԱԾՔ

Այսօրվա գործը վաղվան չեն թողնի: Այսինքն՝ պետք չէ ծուլանալ, ասել՝ լա՛վ, վաղը կանեմ: Եթե այսօր չանես, վաղը կարող է ուշ լինել:

2 Հորինի՛ր մի պատմություն նկարների շուրջ՝ «Այսօրվա գործը վաղվան չեն թողնի» վերնագրով:

ԱՌԱԾ, ԱՍԱՑՎԱԾՔ

Առավոտյան նազիրն արթնանում է, տեսնում, որ աղջիկներն իրեն խաբել են: Վազում է թագավորի մոտ և հարցնում.

– Նմանին տեսե՞լ ես:

Թագավորը զարմանքով նայում է նրա կես մորուքին, կես մազերին, մի հոնքին ու մի բեղին և ասում.

– Չէ՛, ո՛չ Նմանին եմ տեսել, ո՛չ էլ քեզ նմանին:

– Իսկ Ուրիշի՞ն:

– Ուրիշին էլ չեմ տեսել:

Նազիրը հուսահատված կանչում է փոքր աղջկան.

– Տեսա՛, Տեսա՛:

– Ի՞նչ տեսար,– հարցնում է թագավորը:– Տեսա՞ր, որ ուրիշի համար փոս փորողն ի՛նքն է ընկնում մեջը:

Հարցեր

1. Առավոտյան ի՞նչ արեց նազիրը, երբ արթնացավ:
2. Տարօրինակ անուններն ինչպե՞ս օգնեցին աղջիկներին:
3. Ինչո՞ւ թագավորն ասաց. «Ուրիշի համար փոս փորողն ինքն է ընկնում մեջը»:

1 Դերային խաղով ներկայացրեք թագավորի և նազիրի երկխոսությունը:

2 **Կարդա՛ և սովորի՛ր**

Ի՞նչ է անում, ի՞նչ է լինում հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս գործողություն:

Օրինակ: Արմենը վազում է (ի՞նչ է անում):

Աշնանը խաղողը հասնում է (ի՞նչ է լինում):

Օրը մթնում է (ի՞նչ է լինում):

3 Դի՛ր համապատասխան հարցը՝ **ո՞վ, ի՞նչ** կամ **ի՞նչ է անում.**

նազիր, թագավոր, նայում է, արթնանում է, մորուք, մազ, կանչում է:

Բնագրից ընտրի՛ր և կարդա՛ այն նախադասությունները, որոնցում կան այդ բառերը:

4 **ԱՌԱԾ**

Ուրիշի համար փոս փորողն ինքն է ընկնում մեջը:

Պետք չէ ուրիշին վատ բաներ ցանկանալ, վատ բաներ անել:

ՕՐՀՆԱՆՔ-ՄԱՂԹԱՆՔ

Աղջիկները ոսկին բերում հասցնում են տուն: Հայրը շատ է ուրախանում, որ իր աղջիկները խելացի են և հնարամիտ: Մայրն օրհնում է աղջիկներին.

Կարմիր վարդ ու լայն տերև՛,
Բացվեցիք այգուս վերև,
Ինչքան ունի այգիս տերև,
Այնքան կուզեմ ես ձեզ արև:

Մեծանաք դուք հազար տարի
Ու չգաք դուք ոչ մի չարի,
Այն օրը, որ չարի պիտ գաք,
Ձեր չարերը դառնան բարի:

Երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ հեքիաթ գրողին:



Հարցեր

1. Աղջիկներն ինչի՞ շնորհիվ հասան իրենց նպատակին:
2. Մեկ անգամ ևս ընթերցի՛ր օրհնանքը: Ինչպե՞ս կարող ես մեկնաբանել վերջին երկու տողը:

1 Օրհնանք

Ոտքդ քարին չդիպչի:

Ինչպե՞ս ես հասկանում այս օրհնանքը: Մեկնաբանի՛ր:

2 Շարունակի՛ր

նկար – նկարել
շար – ....
սղոց – ....
կանչ – ....
պար – ....

3 Շարունակի՛ր

բույն – բներ
երեխա – ....
արագիլ – ....
կտուց – ....
բարեկամ – ....

4 Որոշի՛ր ստացված բառերի հարցերը:

5 Հետաքրքրաշարժ բառեր

Այտ, յուղ, տղա բառերի առաջին տառերով կարդացվում է այտ բառը: Երկրորդ տառերով՝ ....: Երրորդ տառերով՝ ....:

Այդպիսին են նաև կկու, կող, ուղտ բառերը: Ստուգի՛ր ինքդ:

Որոշի՛ր այդ բառերին տրվող հարցերը:

6 Հիշենք մի առած

Մոր մի օրհնանքը յոթ անեծք կքանդի:

7 Աղջիկներն առաջնորդվում էին այս նշանաբանով.

Քո նպատակին հասնելու համար
Պիտի սովորես ու լինես համառ:

Իսկ դո՞ւ:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն էր հեքիաթում բարին, և ո՞րը՝ չարը: Ո՞վ է հաղթում հեքիաթում՝ բարին, թե՞ չարը:
2. Ի՞նչ դարձվածքներ, ասացվածքներ և առածներ սովորեցիր: Դրանցից ո՞ր մեկը քեզ շատ դուր եկավ: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ խաղիկներ, հանելուկներ, շուտասելուկներ, սուտասելուկներ, խնդուկներ ես հիշում: Ինքդ էլ հորինի՛ր և կարդա՛ ընկերներիդ համար:
4. Բնութագրի՛ր գյուղացուն, աղջիկներին և նազիրին:
5. Որոշի՛ր՝ քո ընթերցած հեքիաթում ո՞ր դեպքերը կարող են իրական լինել, որո՞նք՝ ոչ:
6. Ի՞նչ ժողովրդական ստեղծագործությունների հանդիպեցիր այս բաժնում: Թվարկի՛ր դրանք:
7. Ինչո՞ւ է այս բաժինը կոչվում «Ժողովուրդն իմաստուն է»: Ուրիշ ի՞նչ վերնագիր կարելի էր դնել:
8. Հեքիաթից արտագրի՛ր անձ և իր ցույց տվող չորսական բառ և գրի՛ր սյունակներով:
9. Դիտի՛ր նկարը: Գրի՛ր ո՞վ և ի՞նչ հարցերին պատասխանող առարկաների անունները:
10. Գրի՛ր մարդկանց այնպիսի՛ անուններ, որոնք սկսվում են հետևյալ վանկերով.
    Ա, Սու, Կա, Վա:

11. Անվանի՛ր և գրի՛ր: Տո՛ւր համապատասխան հարցը:

ՍՏՈՒԳԻՐ ՔԵԶ

ՈՐՈՇԻՐ, ԹԵ ԱՅՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՐՆ ԻՆՉ Է:

ԴԱՐՁՎԱԾՔ

1 Ձրի պես երկար կյանք ունենաս:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

2
– Օցի՛, օցի՛,
Աչքփակոցի,
Եկեք խաղանք
Պահմտոցի...

– Ես մնացի,
Դու գնացիր,
Ես փակեցի,
Դու պահվեցիր...

ՍՈՒՏԱՍԵԼՈՒԿ

3 Ունեմ մի սագ՝ գարու չափ,
Ձու է ածում սարի չափ,
Երկու թևը թե բացի,
Գիշեր կգա, իմացի՛ր:

ԱՌԱԾ

4 Հեռվում սիրուն Արարատ՝
Վրան ձյուն կա շատ առատ:

ՀԱՇՎԵԼՈՒԿ

5 Ով աշխատի, նա կուտի:

ՀԵՔԻԱԹ

7 Գլխից մեծ գործ բռնել

ՀԱՆԵԼՈՒԿ

8
– Ձեր դասարանում քանի՞ գերազանցիկ կա:
– Ինձ չհաշված՝ չորս:
– Բա քեզ ինչո՞ւ չես հաշվում:
– Ես գերազանցիկ չեմ:

ԽԱՂԻԿ

9 Օրո՛ր, օրո՛ր, իմ սիրունիկ,
Օրոր ասեմ, դու՝ նանա,
Երկար ապրես կարմիր օրեր,
Կարմիր արև ունենաս:

ԽՆԴՈՒԿ

10 Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գողտիկ-մողտիկ*,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կծլվլան
Կլթիկ-կլթիկ:

ՕՐՈՐ

11 Աշխարհի ծայրին կհասնի,
Հավի պոչին չի հասնի:

12 Ո՞ր ստեղծագործության անվանումը չկար:

6 Տարին չորային է լինում: Արտերն անձրև են ուզում: Աստված ողորմաց, երկինքն ամպեց. կաթկթաց, անձրևեց: Մի գյուղացի վազեց դուրս, կանչեց.

– Մենակ ի՛մ արտի վրա արի, մենակ ի՛մ արտի վրա արի:

Մեկ էլ ինչ տեսնի գյուղացին: Տեսավ՝ իր սև բախտից գռգռոց ընկավ, անձրևը դարձավ կարկուտ, շրխկալով իջավ հողին: Գյուղացին կանչեց.

– Բոլորի՛ արտերի վրա արի, բոլորի՛ արտերի վրա արի...

1. Առածները «քանդվել» են: Հավաքիր և գրիր հրաշալիքների տետրում:

Ուշ լինի,

նա կուտի:

Թթու է թան չէ,

Գյուղ կանգնի՝

գերան կկոտրի:

Ով աշխատի,

Ստի ոտքերը

նուշ լինի:

կարճ են:

ամեն մարդու բան չէ:

2. Այս նկարը ո՞ր առածին է վերաբերում: Կարո՞ղ ես մեկնաբանել առածը: Եթե չես կարող՝ կարդա՛:

Այս առածը սովորեցնում է, որ եթե բոլորը միանան, կկարողանան կատարել այն, ինչն առանձին-առանձին չէին կարող կատարել:

3. Սովորաբար ինչպե՞ս են վերջանում հայ ժողովրդական հեքիաթները.
Երկնքից երեք .... ընկավ: Մեկը՝ ....ին, մեկը՝ ....ին, մեկն էլ՝ հեքիաթ գրողին:

4. Գիտե՞ս, թե ինչ է հանելուկը:
Հանելուկն ասելիս՝ մտապահված առարկայի անունը չեն ասում: Նշում են նրա որևէ հատկանիշ կամ ասում են, թե ինչ կարող է անել այն:
Օրինակ: Ես նրա եղբայրն եմ, բայց նա իմ եղբայրը չէ: Ո՞վ է նա:
(Պատասխան՝ իմ քույրը:)
Հորինի՛ր մի հանելուկ թզուկի մասին:

5 **Ստուգի՛ր ինքդ քեզ. լրացրո՛ւ բաց թողնված տառերը.**

□սկի, խ□ել, թա□ավոր, ավա□ , տար□ինակ, ար□են, փոր□ել, շո□, աղ□իկ, խա□ել, հեք□աթ:

ՍՏՈՒԳԻՐ ՔԵԶ (էջ 45)

1 – օրինանք *(սա չկար)*
2 – հաշվելուկ
3 – սուտասելուկ
4 – շուտասելուկ
5 – առած
6 – հեքիաթ
7 – դարձվածք
8 – խնդուկ
9 – օրոր
10 – խաղիկ
11 – հանելուկ *(պատասխան՝ ճանապարհ)*

ՏԵՍՆԵՍ՝ ԼԱ՞Վ Է, ԹԵ՞ ՎԱՏ



ՃՈՒՏԻԿԸ

Կոռնեյ Չուկովսկի

Լինում է, չի լինում՝ մի պստիկ ճուտիկ:

Ա՛յ, այսպիսի ճուտիկ:

Բայց նա կարծում էր, թե ինքը մեծ, շա՛տ մեծ է: Երբ ման էր գալիս բակում, փքվում* էր, գլուխը բարձր պահում:

Ա՛յ, այսպես:

Ճուտիկը մայրիկ ուներ: Անունը՝ Մարիկ՝ գիրուկ* մի հավիկ:

Ա՛յ, այսպիսի մայրիկ:



Մարիկը ճուտիկին շատ էր սիրում: Նրան կերակրում էր որդերով: Մի անգամ Մարիկի վրա հարձակվեց սևուկ փիսիկը և նրան քշեց մինչև լճի ափը:

Ա՛յ, սա է սևուկ փիսիկը:

Ճուտիկը մնաց ցանկապատի մոտ: Հանկարծ նա տեսավ, թե ինչպես աքլորը, վիզը ձգած, փետուրները ցցած, լայն-լայն քայլերով, բարկացած մոտեցավ Փիսիկին:

Փիսիկը վախեցած փախավ: 49

որդ, անգամ՞

1 Կարդա՛ և սովորի՛ր

Ինչպիսի՞ հարցին պատասխանող բառերը հատկանիշ ցույց տվող բառեր են:

Օրինակ՝ պստիկ ճուտիկ, մեծ ճուտիկ, դեղին ճուտիկ, փքված ճուտիկ բառակապակցություններում պստիկ, մեծ, դեղին, փքված բառերը ցույց են տալիս, թե ինչպիսին է ճուտիկը:

2 Գործողություն ցույց տվող բառերը դարձրու հատկանիշ ցույց տվող բառեր.

բարակել, կարմրել, չորանալ, կանաչել:

Օրինակ՝ դեղնել – դեղին:

3 Նկարելուկներ



Նկարելուկները գրի՛ր բառերով և լուծի՛ր:

4 Բնագրից գտի՛ր և գրի՛ր, թե ինչպիսին են ճուտիկը, հավիկը, փիսիկը:

Աքլորը թռավ ցանկապատի վրա, թևերը թափ տվեց, վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ բարձր ձայնով կանչեց՝ ծո՛ւղ-ղո՛ւ-ղո՛ւ:

Հետո դեսուդեն նայեց ու ասաց.

– Մի՞թե ես քաջ չեմ, մի՞թե լավը չեմ:

Այս բանը ճուտիկին շատ դուր եկավ: Ինքն էլ վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ ամբողջ ուժով ծվծվաց.

– Ծի՛-ծի՛-ծի՛-ծի՛: Ես էլ եմ քաջ, ես էլ եմ լավը:

Բայց սայթաքեց* և ընկավ ջրափոսը:

Ա՛յ, այսպես:

Գորտը տեսավ ճուտիկին ու ծիծաղեց…

Հարցեր

1. Ո՞Ի՞մ էր ուզում նմանվել ճուտիկը: Կարողացա՞վ:
2. Քո կարծիքով՝ ինչո՞ւ էր ծիծաղում գորտը:
3. Գուշակի՛ր՝ ինչպիսի՞ն կդառնա ճուտիկը, երբ մեծանա: Իսկ դու ինչպիսի՞ն ես ուզում դառնալ:

2 Լրացրո՛ւ և ստացի՛ր նոր բառակապակցություններ.

կլոր
- ափսե
- լուսին
- ....
- ....

1 Դեղին, կռկռան, կաթնատու, թթու, կանաչ, փետրավոր, թևավոր, լողորդ հատկանիշ ցույց տվող բառերը վերագրի՛ր ճուտիկին և գորտին՝ ըստ գծապատկերի.

հատկանիշ	+	առարկա	=	բառակապակցություն

Օրինակ՝ դեղին + ճուտիկ = դեղին ճուտիկ,

կանաչ + գորտ = կանաչ գորտ:

Ո՞ր բառերը դուրս մնացին: Դրանցով կազմի՛ր այլ բառակապակցություններ:

ՉՐՈՒՅՑ ՀԵՌԱԽՈՍՈՎ

Լևոն Միրիջանյան

Զանգ տվեցի մի օր մեր տուն,
Լսափողը վերցրեց կատուն:
– Ինչ կա, Փիսիկ, ինչ ես անում:
– Մուկ եմ տեսել ես մառանում*,
Այնտեղ պիտի այնքան մնամ,
Մինչև բռնեմ, հանգստանամ:
– Շատ լավ, Փիսիկ, գործիդ գնա,
Շնիկն ուր է, թող մոտենա:
Շունը եկավ.
– Հաֆ, հաֆ, հաֆ, հաֆ...
– Ինչ կա, Շնիկ, ինչ ես հաչում:
Քո տիրոջը չես ճանաչում:
– Մարդ կա բակում, մի խանգարիր,
Հաչեմ, պրծնեմ, զանգահարիր...
Ես, ինձ վրա խիստ բարկացած,
Լսափողը դրեցի ցած.
«Ինչ եմ նրանց ես խանգարում,
Ո՞վ կա պարապ այս աշխարհում,
Թե՛ մարդ լինի, թե՛ կենդանի՝
Ամեն մեկը իր գործն ունի»:

2 Ուրիշ ո՞ւմ է զանգահարել տղան նկարում: Դերային խաղով ներկայացրեք երկխոսությունը:

Հարցեր

1. Ինչո՞վ էր զբաղված Փիսիկը:
2. Ի՞նչ պատասխանեց Շնիկը:
3. Քո կարծիքով՝ կարելի՞ է հեռախոսով շատախոսել:
4. Ինչպե՞ս ես հասկանում «Ո՞վ կա պարապ այս աշխարհում» տողը: Իսկ ո՞րն է քո աշխատանքը:

1 Արագ, սրտաճմլիկ, բարձրաձայն, համաչափ, սիրալիր, հոնգուր-հոնգուր, դանդաղ, գլխապատառ, ցածրաձայն, մաշված հատկանիշ ցույց տվող բառերը վերագրիր գործողություն ցույց տվող վազել և լացել բառերին՝ ըստ գծապատկերի:

հատկանիշ	+	գործողություն	=	բառակապակցություն

Օրինակ՝ համաչափ + վազել = համաչափ վազել,
սրտաճմլիկ + լացել = սրտաճմլիկ լացել:

Ո՞ր բառերը դուրս մնացին: Դրանցով կազմի՛ր այլ բառակապակցություններ:

Ո՞Ր ՄԵԿՍ ԿԱՄԱՉԻ

Ժողովրդական զրույց



Երկու ընկեր գնում են անապատով*: Մեկը շատ է ծարավում, ուժասպառ ընկնում է ավազներին: Մյուսը ջուր ունենում է, բայց չի տալիս ընկերոջը, թողնում գնում է:

Մի քարավան է անցնում այդ կողմերով: Տեսնում են ուշագնաց տղային, ջուր են տալիս: Տղան ոտքի է կանգնում, գնում հասնում է ընկերոջը: Ոչինչ չի ասում նրան: Միասին շարունակում են ճանապարհը: Ջուր չտվող ընկերը հանկարծ սայթաքում է, ընկնում ու ոտքը կոտրում: Մյուս ընկերը շալակում է նրան ու հասցնում քաղաք:

– Դե, մնաս բարով,– ասում է նա:– Քանի դեռ ապրում ենք, դու քո ջրից խոսիր, ես՝ իմ շալակելուց: Տեսնենք՝ որ մեկս կամաչի:

սայթաքել

Հարցեր

1. Ճիշտ վարվեց ջուր ունեցող ընկերը: Ինչու:
2. Ճիշտ վարվեց ջուր չունեցող ընկերը: Ինչու:
3. Դու ինչպես կվարվեիր:
4. Քո կարծիքով՝ ո՞ր ընկերը կամաչի:
5. Եթե հանդիպեիր ընկերներին, ինչ կասեիր:

1 Դու գիտես, որ ծառերն ունեն արմատներ և ճյուղեր՝ ամ, այսպես.



2 Իմացիր, որ բառերն էլ ունեն արմատներ և ճյուղեր՝ ամ, այսպես.

3 Գտիր հայր արմատի «ճյուղերը» և գրիր տետրում:

4 Կարդա՛ և սովորիր

Արմատը բառի հիմնական իմաստն արտահայտող մասն է, հիմքը: Նրա վրա կառուցվում են այլ բառեր:

Օրինակ՝ զանգ արմատից ունենք զանգել, անզանգ, զանգուլակ, զանգակ բառերը:

5 Իմացիր, որ...

Միայն արմատից կազմված բառերը պարզ բառեր են:

ԿԱՊՈՒՅՏ ՏԵՐԵՎՆԵՐ

Վալենտինա Օսեևա

Անին երկու կանաչ մատիտ ուներ, իսկ Սոնան ոչ մի հատ չուներ:

Մի օր Սոնան խնդրեց Անիին.

– Քո կանաչ մատիտը տո՛ւր, նկարներս ներկեմ:

– Մայրիկիս հարցնեմ, հետո,– պատասխանեց Անին:

Մյուս օրը Սոնան հարցրեց.

– Մայրիկդ թույլ տվե՞ց:

– Մայրիկս թույլ տվեց, բայց ես վախենում եմ՝ դու մատիտը կոտրես:

– Ես զգույշ կլինեմ,– ասաց Սոնան:

– Տե՛ս,– խրատեց Անին,– չսրես, ամուր չսեղմես և շատ էլ չներկես:

– Ես միայն ծառերի տերևները պիտի ներկեմ և մեկ էլ՝ կանաչ խոտը:

– Դա շատ է,– հոնքերը կիտելով՝ ասաց Անին:

Սոնան նայեց նրան ու հեռացավ՝ առանց մատիտը վերցնելու: 53



Հարցեր

1. Սոնան ի՞նչ խնդրեց Անիից: Ինչո՞ւ:
2. Անին ինչպե՞ս վարվեց Սոնայի հետ:
3. Ինչո՞ւ Սոնան չվերցրեց մատիտը:

զգույշ, սեղմել

1

Գրի՛ր բեզ ծանոթ կանաչ առարկաների անուններ:

Դրանցով կազմի՛ր բառակապակցություններ:

3

Վանկերի բաժանի՛ր սրել, խմել, սնունդ, կտոր, նվեր, վտանգ բառերը:

2

Կարդա՛ և սովորի՛ր

Բառերի մեջ արմատի վերջում կամ սկզբում կարող են լինել մասնիկներ, որոնք փոխում են բառի իմաստը: Դրանք կոչվում են ածանցներ: Օրինակ՝ տուն – անտուն, համ – անհամ, խմոր – խմորեղեն, խոսել – չխոսել, գույն – դժգույն, տես – չտես:

4

Իմացի՛ր, որ...

Ածանց ունեցող բառերը կոչվում են ածանցավոր բառեր:

Օրինակ՝ ուրախ – ուրախություն, թագ – թագավոր, թագուհի, գլուխ – անգլուխ, ընկեր – ընկերական և այլն:

Անին զարմացավ, վազեց Սոնայի հետևից.
– Հը՛, ինչ եղավ: Վերցրու:
– Հարկավոր չէ,– պատասխանեց Սոնան:
Դասի ժամանակ ուսուցչուհին հարցրեց.
– Սոնա՛, ինչու՞ են քո ծառերի տերևները կապույտ:
– Կանաչ մատիտ չունեմ:
– Իսկ ինչու՞ ընկերուհուցդ չվերցրիր:
Սոնան լռեց, իսկ Անին կարմրելով ասաց.
– Ես մատիտը տալիս էի, բայց նա չվերցրեց:
Ուսուցչուհին նայեց Անիին և ասաց.
– Այնպես պետք է տայիր, որ նա վերցներ:

ուսուցչուհի

Հարցեր

1. Անին մատիտն ինչպե՞ս պետք է տար, որ Սոնան վերցներ: Ստեղծի՛ր երկխոսություն:
2. Դու օգնո՞ւմ ես քո ընկերներին:
3. Ինչու՞ է պատմվածքը կոչվում «Կապույտ տերևներ»: Դու ի՞նչ վերնագիր կդնեիր պատմվածքին:

3 Շարունակի՛ր

ձի – ձիավոր
թագ – ....
գլխարկ – ....
դանակ – ....
պոչ – ....
պոզ – ....

1 Պատմվածքը սովորեցնում է Այնպես պիտի օգնես ընկերոջդ, որ նա չվիրավորվի:
Մեկնաբանի՛ր:

4 Գտի՛ր հետևյալ բառերի արմատները. ընկերուհի, մայրիկ, ներկել:

2 Գտե՛ք, թե որ արմատից են ծնվել հետևյալ բառերը. թագավոր, թագուհի, թագավորական, ոսկեթագ, թագավորել, անթագ, անթագավոր:

5 Բնագրից ընտրի՛ր ուհի ածանցով վերջացող բառեր: Լրացրու՛ շարքը, ընդգծի՛ր արմատները:

Առած

Լավ անես՝ քեզ կանես,
վատ անես՝ քեզ կանես:

6 **Բառքամոցի**

Ընկերություն բառի տառերով կազմի՛ր նոր բառեր:

Ո՞Վ Է ՄԵԶԱՆԻՑ ԳԵՂԵՑԻԿԸ

Գեղեցիկ Մովսիսյան

Լուսիկն ու Սուսիկը երկվորյակներ* էին և անչափ նման իրար: Այնքան նման, որ երբ միասին նայում էին հայելու մեջ, նույնիսկ իրենք էին իրենց շփոթում:

Հարևանները երբեք չէին կարողանում նրանց տարբերել:

Սակայն մայրիկը նրանց չէր շփոթում, թեև միատեսակ էր հագցնում:

– Մայրիկ, դու մեզ ինչպես չես շփոթում,– մի օր հարցրին քույրերը:

– Ձեզանից մեկն ավելի գեղեցիկ է,– պատասխանեց մայրը,– իսկ թե ով՝ կասեմ երեկոյան: Իսկ այժմ հարկավոր է ջրել ծաղիկները, մաքրել բակը, դասավորել խաղանկյունը:

Մինչ Սուսիկը խաղում էր ջրի հետ, Լուսիկն արդեն ջրել էր ծաղիկները, մաքրել բակը, դասավորել խաղալիքները: 55

հայելի

Հարցեր

1. Երկվորյակ աղջիկներն ինչ էին ուզում իմանալ մայրիկից:
2. Քո կարծիքով՝ ինչո՞վ էին տարբերվում Լուսիկն ու Սուսիկը:

2 Ո՞ր բառերն են «հակառակորդներ».

Նման, տխրել, գեղեցիկ, տարբեր, տգեղ, մաքրել, ուրախանալ, կեղտոտել:

1 Խառնագիր

Բառի տառերը խառնվել են: Վերականգնի՛ր բառը.

ոքյու, մյրա, բկա, ղխա, իծղկա, եկմ:

Օրինակ՝ իծղկա – ծաղիկ:







3 Նկարելուկները գրի՛ր բառերով և լուծի՛ր:

Շուտասելուկ

Պատուհանի բաց փեղկը պետք է փակես, փակ փեղկը պետք է բացես:

Երեկոյան՝ ընթրիքից հետո, երեխաները հարցրին.

– Ասա՛, մայրիկ, ո՞վ է մեզանից գեղեցիկը:

Մայրիկը նայեց աղջիկներին, նայեց ու ասաց.

– Ես լավ չեմ հիշում. առավոտյան ո՞վ ջրեց ծաղիկները:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ո՞վ մաքրեց բակը:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ո՞վ դասավորեց խաղալիքները:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը:

– Ուրեմն, ո՞վ է ձեզանից ավելի գեղեցիկ:

– Լուսիկը,– ասաց Սուսիկը և կարմրեց:

Նա հասկացավ, թե ինչու է Լուսիկն իրենից գեղեցիկ:

Հարցեր

1. Մայրիկն իրո՞ք չէր հիշում, թե ով է կատարել բոլոր գործերը:
2. Ինչո՞ւ կարմրեց Սուսիկը:
3. Դո՞ւ ինչ գործեր ես կատարում տանը: Պատմի՛ր:

2 Գտի՛ր բառերի արմատները և գրի՛ր տետրում.

անչափ, մայրիկ, երեկոյան, խաղանկյուն, առավոտյան:

3 Դերային խաղով ներկայացրեք բնագրի երկխոսությունը:

1 Վանկախաղ

Կազմիր այնպիսի բառեր, որոնց առաջին վանկերը լինեն հետևյալ բառերի վերջին վանկերը.

կաթսա, շիլա, գաթա, վկա, հիմա, ընծա, զուռնա:

Օրինակ՝ զուռնա – նամակ, նանիկ, նազանք և այլն:

4 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ: Համեմատի՛ր բնագրի հետ:

Առած

Հիշողությունը գեղեցկությունն է մարդուն:

ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ

Ժողովրդական զրույց



Լինում է, չի լինում՝ մի հարուստ մարդ է լինում: Ամեն ինչ ունենում է ու չի աշխատում:

Օրերից մի օր այդ հարուստը հիվանդանում է: Ոչ մի բժիշկ չի կարողանում նրան բուժել:

Իսկ գյուղի հովիվը հարուստ չէր, բայց շատ առողջ էր: Հարուստը հարցնում է հովվին.

– Հովիվ ախպեր, քո կերածն ինչ է, որ այդքան առողջ ես: Ես ինչ ասես ուտում եմ, բայց էլի հիվանդ եմ:

Հովիվն ասում է.

– Դու քո մի օրվա ուտելիքը վերցրու, գնանք սարերը: Ես սարերում կպատասխանեմ քո հարցին:

Հարուստը շատ ու շատ ուտելիք է վերցնում, ու գնում են սարերը: Նստում են հաց ուտելու: Հովիվը կաթ է կթում, հացը բրդում* մեջը և ուտում: Հարուստն էլ իր բերածից է ուտում: Ուտելուց հետո հովիվը հարուստին ասում է.

– Քո ուտելիքը դիր մի տեղ, գնանք մի քիչ ման գանք: 57

բրդել, առողջ

Հարցեր

1. Ինչ է ուզում իմանալ հարուստը հովվից:
2. Ինչ է առաջարկում հովիվը հարուստին:
3. Քո կարծիքով՝ հովիվն ինչու՞ միանգամից չի պատասխանում հարուստի հարցին:

3 Շարունակիր

հարուստ – աղքատ
հիվանդ – առողջ
վախկոտ – ....
տգեղ – ....
թույլ – ....

1 Բնագրից գտիր պարզ բառերը և գրիր տետրում:

2 Նախադասությունները վերադասավորիր ըստ բնագրի:

Հովիվը կաթ է կթում, հացը բրդում մեջը և ուտում:

Լինում է, չի լինում՝ մի հարուստ մարդ է լինում:

Հարուստը հարցնում է հովվին:

Նստում են հաց ուտելու:

4 Ինչպիսին է հարուստը, ինչպիսին է հովիվը.

գեր, առողջ, ագահ, քչակեր, շատակեր, հիվանդ, արագաշարժ, աշխատասեր, դանդաղաշարժ, բարեկազմ:

Հովիվն էլ կաթ է կթում, դնում սառն աղբյուրի մոտ:

Գնում են, երեք-չորս ժամ սարերում ման են գալիս: Էս հարուստի շունչը կտրվում է, չի կարողանում քայլել: Իսկ հովիվն իրեն շատ լավ է զգում: Չորս ժամ հետո գալիս են աղբյուրի մոտ: Տեսնում են՝ հովվի կաթը սեր է բռնել, սառը, լավ մնացել: Իսկ հարուստի ուտելիքը շոգից թթվել, փչացել է:

Հովիվն ասում է.

– Քո հարցի պատասխանը քո կերածն է: Քո կերածը քո մեջ փչանում է ու քեզ հիվանդացնում, քանի որ ուտելուց հետո դու չես աշխատում: Աշխատանքն է մարդուն առողջ պահում: Եթե չես ուզում հիվանդանալ, պիտի չափավոր ուտես ու աշխատես:

Հարցեր

1. Հովիվը երբ պատասխանեց հարուստի հարցին:
2. Ինչո՞ւ էր հարուստը հիվանդանում:
3. Ինչ խորհուրդ տվեց առողջ հովիվը հիվանդ հարուստին:
4. Քո կարծիքով՝ ուրիշ ինչ է պետք առողջ լինելու համար:

աղբյուր

2 Գտի՛र, թե թվարկածներից ինչը չկա նկարում, և նկարագրի՛ր այդ միրգը.

սալոր, ծիրան, խնձոր, խաղող, տանձ, բալ:

1

Հրազդան գետը, սկիզբ առնելով Սևանա լճից, հասնում է Երևան և հետո գնում թափվում Արաքս գետը: Երևանը գտնվում է Արարատ, Արագած և Աժդահակ լեռների գրկում:

Ինչպես տեսնում ես՝ բնակավայրերի, լեռների, գետերի, լճերի անունները գրում ենք մեծատառով:

3 Ինչպիսին է խնձորը, ինչպիսին է ապակին.

կլոր, համեղ, փշրվող, ուղղանկյուն, թափանցիկ, անուշահոտ:

Առած

Հողքարը հայի՛ կարոտ է, հարուստը՝ ամե՛ն բանի:

ԹՈՒԹԱԿԸ

Մարո Աբրահամյան-Թաթիկյան

Հայրիկը մի թութակ էր գնել:

– Գիտե՞ս, Բաբկե՛ն, այս թռչունը խոսել գիտի,– ասաց նա:

Բաբկենն ուրախացավ և թութակի անունը Խոսկան դրեց:

Նա Խոսկանին սովորեցրեց առավոտյան ասել՝ բարի լո՛ւյս, երեկոյան՝ բարի գի՛շեր:

Մի օր էլ, երբ ճաշում էին, թութակը ճչաց.

– Լա՛վ եմ անում, լա՛վ եմ անում, քե՛զ ինչ...

Բոլորը զարմացան, հայրիկը նայեց Բաբկենին, մայրիկը նայեց Բաբկենին, տատիկն էլ նայեց, քույրիկն էլ, եղբայրն էլ: Իսկ Բաբկենը գլուխը մեղավորի պես կախեց...

– Ես պիտի դո՛ւրս անեմ այս անկարգ թութակին,– զայրացած ասաց հայրիկը և մոտեցավ Խոսկանի վանդակին:

Բաբկենը թռավ տեղից ու գրկեց վանդակը:

– Խոսկանը լավն է, հայրի՛կ, համ էլ... համ էլ անկարգ չէ... Ազնի՛վ խոսք, հայրի՛կ,– լացակումած ասաց Բաբկենը:

Հարցեր

1. Ինչ նվեր ստացավ Բաբկենը և ինչո՞ւ անունը դրեց Խոսկան:
2. Թութակն ումի՞ց էր լսել «վատ խոսքերը»:
3. Բաբկենն ինչո՞ւ մեղավորի պես գլուխը կախեց:
4. Եթե դու թութակ ունենայիր՝ ի՞նչ անուն կդնեիր նրան և ի՞նչ կսովորեցնեիր:

2 Բառերն արտագրի՛ր տետրում և ընդգծի՛ր արմատները: Ո՞ր բառերն են կազմված միայն արմատից: Հիշի՛ր՝ ինչ են կոչվում այդ բառերը:

Թութակ, գլուխ, հայրիկ, մայրիկ, եղբայր, երեկոյան, անկարգ:

1 Պատասխանը հարցի մեջ

Ի՞նչ էր ուտում թութակը:

Փետուրները ցցելով՝ ի՞նչ ասաց թութակը:

Անուշն ի՞նչ տվեց նրան:

Թութակն ինչքա՞ն է սիրում փշատ:

3 Ինչո՞վ են նման և ինչո՞վ են տարբեր առարկաների զույգերը: Իսկ բառերը.

գիրքը և տետրը,

սեղանը և աթոռը:



ՏՂԱՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Լիպարիտ Սարգսյան

– Փոքրիկ մրջյուն, ժիր մրջյուն,
Ինչ ես վազում օրնիբուն*,
Կանգ չես առնում մի վայրկյան,
Դու օր չունե՞ս հանգստյան:

Արտում ցորենն այսքան շատ,
Այգին լի դեղձ ու փշատ,
Որքան կուզես՝ գնա կեր,
Ինչ ես իրար խառնվել:

– Խելո՛ք տղա, լա՛վ տղա,
Գնա՛ անհոգ* դու խաղա,
Չես հասկանում, փոքր ես դեռ,
Առջևում կա ցուրտ ձմեռ:

Տաք օրերը կգնան,
Այգում էլ բան չի մնա,
Այն ժամանակ որտեղի՞ց
Ես ուտելիք գտնեմ ինձ:

Ես իմ գործը լավ գիտեմ,
Իսկ դու հիշի՛ր այսքանը.
Հիմա պիտի աշխատեմ,
Որ վայելեմ ձմռանը:

Հարցեր

1. Փոքրիկ տղան ինչ հարցրեց մրջյունին և ինչ առաջարկեց նրան:
2. Ինչո՞ւ մրջյունը հանգստյան օր չուներ: Բնութագրի՛ր նրան:
3. Ինչ կլիներ, եթե մրջյունը չաշխատեր:

Մրջյուն, առվակ

1

Հիշո՞ւմ ես

Այբբենարանում **ա** տառը սովորելիս դու ծանոթացել ես հետևյալ բառերին.

գետ, դեղ, արև, սղոց — **ա** — ձի, տուն, ծաղիկ, ձուկ

Քանի՞ արմատ կա այդ բառերից յուրաքանչյուրում:

2

Կարդա՛ և սովորի՛ր

Երկու և ավելի արմատ ունեցող բառերը **բարդ բառեր** են:

Առած

Ամ՞ռանը պառկես հովերը,
ձմ՞ռանը սարկեն կովերը:

ՏԵՍՆԵՍ՝ ԼԱ՞Վ Է, ԹԵ՞ ՎԱՏ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞րն է այս բաժնի՝ քեզ ամենից շատ դուր եկած դասանյութը: Ինչո՞ւ: Հիմնավորիր կարծիքդ:

2. Ո՞րն է այս բաժնի՝ քո ամենասիրելի հերոսը: Ինչո՞ւ: Հիմնավորիր կարծիքդ՝ բնութագրելով նրան ու նկարագրելով նրա արարքները: Կարո՞ղ ես նկարել նրան, փորձիր:

3. Համեմատիր «Կապույտ տերևներ» և «Ո՞ր մեկս կամաչի» բնագրերը:

4. Քո կարծիքով՝ ովքե՞ր են այս բաժնի.
ա. ամենաընկերասեր, բ. ամենաաշխատասեր,
գ. ամենախելացի, դ. ամենագեղեցիկ
հերոսները: Հիմնավորիր կարծիքդ ըստ նրանց արարքների:

5. Հիշիր այս բաժնի առածները: Դրանցից ո՞ր մեկը քեզ հատկապես դուր եկավ: Ինչո՞ւ:

6. Այս բաժնի հերոսներին բաժանիր երկու խմբի: Մի խմբում առանձնացրու քո կարծիքով լավ արարքներ կատարածներին, իսկ մյուս խմբում՝ վատ:

7. Հիշիր և գրիր այնպիսի՛ բառեր ու բառակապակցություններ, որոնցով դու կբնութագրես մարդկանց լավ արարքները:

8. Համեմատիր «Զրույց հեռախոսով» և «Տղան ու մրջյունը» ստեղծագործությունները: Ի՞նչ ընդհանուր բան կար նրանց մեջ: Ի՞նչ սովորեցիր նրանցից:

9. Ի՞նչ նոր վերնագիր կդնեիր այս բաժնին:

10. Խմբավորիր պարզ, ածանցավոր, բարդ բառերը և սյունակներով գրիր տետրում. **անհոգ, մայր, ճուտիկ, անկարգ, ջրափոս, սար, ուսուցչուհի, խաղանկյուն, հեռախոս, օր, հովիվ, հացատուն**:

11. Գտիր ընդհանուր վերջը: Բառերը գրիր տետրում:

սղոց
գետ
օձ
գայլ
ա ☐

12. Գտիր ընդհանուր սկիզբը: Բառերը գրիր տետրում:

☐ ա
մուտ
ծագ
շող
ծաղիկ

ՄԵՐ ԽԱՂԱՂ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

ՄԱՅՐԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Զորայր Խալափյան

Մայրիկի ծննդյան օրն Արփենիկն ասաց.

– Գնամ դաշտ, մի ծաղիկ բերեմ մայրիկիս:

Գնաց դաշտ, տեսավ գույնզգույն շատ ծաղիկներ՝ դեղին, կապույտ, կարմիր, սպիտակ:

Մոտեցավ, որ դեղին ծաղիկը պոկի: Հեռվից մի դեղին թիթեռ եկավ, իջավ ծաղկին, ասաց.

– Վա՛յ, վա՛յ, այդ ի՞նչ ես անում, դեղին ծաղիկն իմ տնակն է: Եթե պոկես, ես որտեղ ճաշ ուտեմ, ջուր խմեմ, երգեմ, ծափ տամ ու պարեմ ամբողջ օրը:

– Լա՛վ, դեղի՛ն թիթեռ,– ասաց Արփենիկը,– չեմ պոկի քո դեղին ծաղիկը: 63

Հարցեր

1. Արփենիկն ինչո՞ւ գնաց դաշտ:
2. Արփենիկն ինչո՞ւ չպոկեց դեղին ծաղիկը:
3. Ի՞նչ ես կարծում՝ թիթեռնիկներն իրո՞ք ապրում են ծաղիկների վրա:

1 Նույնտառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

դարս, մարդ, նշիկ, գերել:

Օրինակ՝ գերել – երգել:

Խնդուկ

– Ո՞վ կարող է տասը ծաղկի անուն ասել,– հարցրեց ուսուցիչը:

– Մեկ մեխակ և ինը վարդ,– պատասխանեց Հայկը:

2 Դերային խաղով ներկայացրեք ծաղիկների զրույցը՝ Արփենիկին տեսնելիս:

գույնզգույն

3 Շարունակի՛ր

այո – ոչ	բարձր – ....
կոշտ –	մեծ – ....
մոտիկ –	սև – ....

4 Բառազույգերը գրի՛ր տետրում:



5 Ո՞ր նկարում ո՛ր ծաղիկն է:
Ո՞ր ծաղիկների նկարները չկան:

Հասմիկ, մեխակ, շուշան, վարդ, կակաչ, ձնծաղիկ, մանուշակ, երիցուկ, հիրիկ:

Արփենիկը մոտեցավ կապույտ ծաղկին, բայց նրա վրա մի կապույտ թիթեռ կար:

– Չպոկե՞ս կապույտ ծաղիկը,– ճչաց կապույտ թիթեռը:– Սա իմ տնակն է:

Արփենիկը ցանկացավ մայրիկի համար սպիտակ ծաղիկ տանել, ապա կարմիր ծաղկին մոտեցավ, բայց բոլոր ծաղիկների վրա թիթեռներ կային՝ ամեն մեկն իր տնակի գույնի:

– Լավ, թիթեռնիկներ,– ասաց նա,– թող մնան ձեր գունավոր տնակները, ես ոչ մի ծաղիկ չեմ պոկի, որ դուք առանց տնակի չմնաք:

Եկավ տուն, պատմեց մայրիկին, թե ինչու նրա համար ծաղիկ չի բերել: Մայրիկը ծիծաղեց, գրկեց նրան, համբուրեց ու ասաց.

– Դու՛ ես իմ ծաղիկը:

համբուրել

Հարցեր

1. Արփենիկն ինչու՞ ծաղիկ չքաղեց:
2. Մայրիկն ուրախացա՞վ, թե՞ տխրեց: Ինչու՞:
3. Դու ի՞նչ ես նվիրում մայրիկիդ նրա ծննդյան օրվա առթիվ:
4. Ո՞րիշ ինչպե՞ս կարող էր Արփենիկը շնորհավորել մայրիկին:

1 Առանձնացրու պարզ և ածանցավոր բառերը: Դրանք առանձին գրիր տետրում.

թիթեռնիկ, թիթեռ, օր, դաշտ, տնակ, գույն, գունավոր, մայրիկ:

2 Բնագրից գրիր եռավանկ չորս բառ: Որոշիր բաղաձայնների և ձայնավորների քանակը:

Ինչու՞ է բոլոր բառերում ձայնավորների քանակը նույնը:

3 Ո՞ր բառերն են «ընկերներ»:

Գտիր և գրիր տետրում:

Ծաղիկ, երկինք, մայրիկ, թիթեռ, գագաթ, ամպ, սար, աղջիկ:

4 Նկարիր թիթեռների ծաղկափողոցը և պատմիր նկարածիդ մասին:



5 Ինչ գույն ունի.

լոլիկը, ձմերուկը, շաքարը, սալորը, կիտրոնը, մոշը:

Պատասխանները գրիր տետրում և կազմիր բառակապակցություններ:

Օրինակ՝ սև մոշ:

ՀԵՔԻԱԹ ԾԵՐ ԶԿԱՆ ՄԱՍԻՆ

Սլավկա Մանևա

Ծովի խորքում ապրում էր մի ծեր ձուկ: Նա շատ թոռներ ուներ: Ձուկ տատիկը շատ իմաստուն ձուկ էր: Նա թոռների համար հեքիաթներ էր պատմում: Թոռները շատ էին սիրում նրան: Ձուկ տատիկը կարողանում էր նույնիսկ լրագրեր* կարդալ, որոնք ծովն էին շպրտում նավերի ուղևորները:

Տարիներն անցնում էին: Ձուկ տատիկի տեսողությունը գնալով վատանում էր: Նա թոռների համար ավելի քիչ էր լրագիր կարդում:

Թոռները տատիկին բժշկի են տանում: Բժիշկը նայում է Ձուկ տատիկին ու ասում.

– Միակ դեղը ակնոցն է:

Ձկները զարմանում են.

– Այդ ակնոց կոչվածն ինչ դեղ է:

– Ապակիներ են, որոնք մարդիկ դնում են իրենց քթին: 65

Հարցեր

1. Ինչպես էր ապրում տատիկն իր թոռնիկների հետ:
2. Ձկնիկներն ինչու՞ իրենց տատիկին տարան բժշկի:

1 Հանելուկ

Կենդանի է լուռ ու մունջ,
Թե՛ պոչ ունի, թե՛ սուր դունչ,
Նա դպրոց է գնում ջրում,
Ջրե տառեր կարդում, գրում:

☺ Խնդուկ

– Տատիկս շատ վախկոտ է:

– Ինչից իմացար:

– Փողոցն անցնելիս ամուր բռնում է ձեռքս:

2 Ինչը ինչպիսին է.

գայլը՝ չար, օձը՝ իմաստուն, արջը՝ փնթփնթան, հավը՝ անխելք, աղվեսը՝ ...., շունը՝ ...., նապաստակը՝ ...., ձուկը՝ ....:

3 Ինչեր են պատկերված: Անունները գրի՛ր տետրում: Առաջին տառերով կարդա՛ մի բառ: Երկրորդ տառերով կարդա՛ մի բառ:

4 Ինչ դեղատոմս է գրել բժիշկը Ձուկ տատիկի համար: Գրի՛ր տետրում:

հարկավոր	ակնոց:	Ձուկ
խոշորացնող	տատիկին	է

Թոռներն սկսում են հերթով հսկել ծովափը: Եվ մի օր մի աղջիկ ակնոցը պատահմամբ գցում է ծովը: Թոռնիկներն ակնոցը բերում են տուն: Երբ տատիկն ակնոցը դնում է, աչքերի առաջ մթնում է: Բժիշկը բացատրում է.

– Դա արևի ակնոց է, իսկ տատիկին խոշորացնող* ակնոց է հարկավոր:

Թոռները, իհարկե, սկսեցին նորից հերթապահել ծովափին:

Մի օր մի ծեր քեռու ակնոցը ջուրն ընկավ: Թոռնիկներն իսկույն վերցրին ու տարան: Ձուկ տատիկը, երբ ակնոցը դրեց, կարծես նոր աչքեր ունեցավ: Նա կարողացավ նորից պարզ տեսնել: Մինչև այսօր էլ նա լրագրեր է կարդում իր թոռնիկների համար ու հեքիաթներ պատմում:

Հրաշք է տատիկ ունենալը:



Հարցեր

1. Ինչ ես կարծում՝ ձուկ թոռնիկները սիրո՞ւմ էին իրենց տատիկին: Հիմնավորիր:
2. Դու էլ ես կարծում, որ հրաշք է տատիկ ունենալը: Հիմնավորիր:
3. Քո կարծիքով՝ ինչ հեքիաթ էր պատմում Ձուկ տատիկը:

հերթապահ

3 Խառնագիր

Բառի տառերը խառնվել են: Վերականգնիր բառը: Ո՞ր բառն է «ավելորդ»:

Ձկու, ոչու, մրու, ողլ, թցա:

1 Ո՞ր կենդանին որտեղ է ապրում.

կապիկ, ծով, ձուկ, անտառ, գորտ, դաշտ, գետաձի, ճահիճ, ձի, գետ:

2 Ըստ նկարների՝ մտքում լրացրու խաչբառը:

Բառերը գրիր տետրում: Կարմիր սյունակում կստանաս մի բառ և կիմանաս, թե ով է քեզ շատ սիրում:



4 Կազմիր բառակապակցություններ հետևյալ բառերով.

տատիկ, փոքրիկ, ակնոց, սիրելի, թոռնիկ, խոշորացնող:

Այս բառակապակցություններով հորինիր մի պատմություն և գրիր տետրում:

ՉԱՐՄԱՆԱԼԻ ԵՆ ՄԱՅՐԻԿՆԵՐԸ

Մարո Աբրահամյան-Թաթիկյան

Զարմանալի են մայրիկները: Երբեք չես կարող նրանց խաբել: Ասենք՝ մի վատ բան ես արել և ուզում ես թաքցնել: Չես կարող. մայրիկը կնայի աչքերիդ և անմիջապես կիմանա:

Իսկ Նունեն դա չգիտեր: Նա սովորություն ուներ սենյակում, ձեռքերը տարածած, պտտվել ու պտտվել: Մինչդեռ մայրիկը բացատրել էր. «Զգո՛ւյշ եղիր: Պտտվելիս հանկարծ կընկնես ու կվնասվես»:

Մի օր մայրիկը տանը չէր: Նունեն սկսեց պտտվել: Պտտվեց, պտտվեց և հետո իրեն չկարողացավ պահել: Ձեռքը դիպավ պահարանին: Կոտրվեց մայրիկի սիրած սկահակը*: 67

երբեք, որպեսզի

Հարցեր

1. Ինչ չարաճճիություն էր անում Նունեն, և ինչ պատահեց:
2. Ինչ չգիտեր Նունեն մայրիկների մասին:

1 Աջ և ձախ սյունակների պարզ բառերը համապատասխանաբար միացրո՛ւ իրար և ստացված բարդ բառերը գրի՛ր տետրում.

պատ	ելք
կես	ման
հաց	օր
արև	շար

2 Աջուձախ

Բառի աջից կամ ձախից ավելացրո՛ւ մեկ տառ և ստացի՛ր նոր բառ.

ավան, ամպ, սուր, եղան, ափ, պարան:

3 Նույնատառիկներ

Յուրաքանչյուր բառի բոլոր տառերով կազմի՛ր նոր բառ.

տամա, գրամ, մշակ, կտավ:

Ըստ կազմության ինչպիսի՞ բառեր ստացար:

4 Ինչը չկա նկարում.

ավտոմեքենան, համակարգիչը, հեռուստացույցը, ինքնաթիռը, ուղղաթիռը, առագաստանավը, աստղանավը:



Անունները գրի՛ր տետրում, ընդգծի՛ր արմատները:

Նունեն լաց եղավ:

Այդ պահին ներս մտավ մայրիկը:

– Ինչ է պատահել: Այս ո՞վ է արել:

Նունեն հեկեկալով ասաց.

– Ար... Ար... Արմինեն:

– Ես ձեր աչքերից հիմա կիմանամ,– ասաց մայրիկը:

Եվ մայրիկը Կարինեի, Արմինեի աչքերին նայելուց հետո դարձավ Նունեին.

– Հապա ի՞նձ նայիր, փոքրիկս:

Նունեն ուզում էր ինչպես միշտ ուղիղ նայել մայրիկի աչքերին, բայց չկարողացավ:

– Եվ դու ասում ես՝ Արմինեն է արել,– բարկացավ մայրիկը:

Նունեն ամոթից աչքերը փակեց ու գլուխը կախեց...

Զարմանալի են մայրիկները: Երբեք չես կարող նրանց խաբել:

ով, ովքեր

Հարցեր

1. Ինչո՞ւ Նունեն սուտ խոսեց:
2. Ինչո՞ւ Նունեն չկարողացավ նայել մայրիկի աչքերին:
3. Մայրիկն ինչպե՞ս իմացավ, որ Նունեն է կոտրել սկահակը:
4. Նունեն հասկացա՞վ իր սխալը:

3 Մեկ բառով ասա՛, թե ինչ են.

արծիվը, աղավնին, ագռավը, կկուն, թութակը, ծիծեռնակը:

Այս բառերը բաժանի՛ր վանկերի:

1 Արտագրի՛ր՝ լրացնելով բաց թողնված տառերը.

□ռեխա, բ□իշկ, □զնի, որ□ի, մինչ□, դեր□ակ, վ□ար, ճամ□որդ:



2 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

☺ *Խնդուկ*

– Աչքերիդ մեջ կարդում եմ, որ սուտ ես ասում:

– Բայց դուք ասում էիք, թե առանց ակնոցի չեք կարողանում կարդալ:

ԾԵՐ ՊԱՊՆ ՈՒ ԹՈՌԸ

Գրիմ եղբայրներ

Պապը շատ էր ծերացել: Ոտքերը թույլ էին, աչքերը չէին տեսնում, ականջները չէին լսում, ատամներ էլ չուներ: Ուտելիս կերակուրը թափում էր վրան: Տղան ու հարսը նրան հացի սեղանի մոտ այլևս չէին նստեցնում և ճաշը տալիս էին տան մի անկյունում: Մի անգամ նրան ճաշ տվեցին կավե ամանով: Պապն ուզեց ամանը քաշել դեպի իրեն, բայց գցեց և կոտրեց: Հարսը զայրացավ և ասաց, որ սրանից հետո նրան ճաշը կտա փայտե տաշտակով*:

Ծերունին միայն հառաչեց և ոչինչ չասաց: 69

Հարցեր

1. Ինչո՞ւ պապին հացի սեղանի մոտ չէին նստեցնում:
2. Ինչո՞ւ որոշեցին պապի ճաշը փայտե տաշտակով տալ:
3. Ծերունին ինչո՞ւ «միայն հառաչեց և ոչինչ չասաց»:

1 Առաջին տառը

Հիշելով այբուբենը՝ փոխի՛ր ծեր բառի առաջին տառը և ստացի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ գեր, դեր:

3 Բնագրից գտի՛ր երկու պարզ բառ, որոնք ման բառի հետ կազմեն բարդ բառեր:

4 *Տառհանելուկ*

Երիտասարդը
Երկուսն ունի,
Իսկ ծերունին՝
Միայն մեկը,
Մանուկը չունի
Բոլորովին,
Բայց կունենա,
Երբ որ
Աշակերտ դառնա:

2 Գտի՛ր «ավելորդը»

Ո՞ր գործիքը փայտ մշակելու համար չէ:
Գործիքների անունները արտագրի՛ր տետրում:



Ինչ գործիքներ է օգտագործել վերևի նկարի երեխան, որոնք չկան այս նկարում:

Ասացվածք

Ծեր Մարդուն պատվի՛ր, որ Ջերանաս, քեզ էլ պատվեն:

Մի անգամ ծերունու հարսն ու տղան նստած նայում էին, թե ինչպես է իրենց որդին փոքրիկ տախտակներից ինչ-որ բան սարքում: Հայրը հարցրեց. «Այդ ի՞նչ ես շինում»:

«Տաշտակ եմ շինում, հայրի՛կ, որ երբ դու և մայրիկը ծերանաք, տաշտակով ձեզ կերակրեմ»,– պատասխանեց տղան:

Մարդ ու կին իրար նայեցին ու լաց եղան: Նրանք ամաչեցին, որ այդպես վիրավորել էին ծերունուն: Այդ օրվանից սկսեցին նրան իրենց հետ սեղան նստեցնել և խնամել*, ինչպես կարգն է:

Հարցեր

1. Ինչո՞ւ ամաչեցին երեխայի հայրն ու մայրը:
2. Գնահատի՛ր թոռնիկի արարքը:

1

Բոլոր թոռնիկներն էլ հետո պապ կամ տատ են դառնում:

Այժմ մենք, մի-մի տառ փոխելով, թոռ-ից ստանանք տատ և պապ.

թոռ – թառ – տառ – տա□ – պատ – պա□:

2

Կազմի՛ր բառակապակցություններ հետևյալ բառերով.

անկյուն, փոքրիկ, մութ, ման, կոտրված, տաշտակ:

3

Բնագրից գտի՛ր այն բառակապակցությունները, որոնց բաղադրիչներից մեկը ծեր, թույլ, կավե, փայտե բառերից մեկն է:

4

Պապը շատ էր ծերացել:

Էր պապը ծերացել շատ:

Համեմատի՛ր գրածները: Ի՞նչ նմանություն և ի՞նչ տարբերություն կա նրանց միջև:

5

Արի՛ ծանոթանանք:

Դու, իհարկե, գլխի ընկար, որ նախորդ առաջադրանքում խոսքն իմ մասին էր: Իսկ ո՞վ եմ ես: Իհարկե՝ նախադասությունը: Ես միտք եմ արտահայտում, իմաստ ունեմ:

Նկարելուկներ



6 Գրի՛ր, թե ինչ բառեր են գաղտնագրված:

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ռազմիկ Դավոյան

Այստեղ մի տուն նկարեմ,
Կողքին մի ծառ նկարեմ,
Վրան մի բույն նկարեմ,
Մեջը ծիծառ* նկարեմ:

Հեռվում շոգ դաշտ նկարեմ,
Կակաչ ու սինձ* նկարեմ,
Ջրով լի տաշտ նկարեմ,
Ու մեջը ինձ նկարեմ:

Կողքիս մայրիկս կանգնի,
Ես ջուր ցանեմ փեշերին.
Խոշոր աստղեր կցոլան
Նրա սրտի գիշերին:

Հետո մի թուփ նկարեմ,
Վրան՝ խոշոր, կարմիր վարդ,
Այնքան անուշ նկարեմ,
Որ զարմանա ամեն մարդ:

3 Համեմատիր նկարը բանաստեղծության բովանդակության հետ:

Հարցեր

1. Ինչ էր ուզում նկարել փոքրիկը: Պատմիր:
2. Իսկ դու ինչ կուզենայիր նկարել:
3. Եղել է մի դեպք, երբ վշտացրել ես մայրիկիդ:

բույն, վարդ

4 Նախադասությունը «քանդվել» է: Բառերը դիր ճիշտ տեղերում և ստացված նախադասությունը գրիր տետրում:

եմ | սիրում | մայրիկին: | շատ | Ես

1 **Հիշում ես**

Նախադասությունն սկսում ենք մեծատառով: Վերջում դնում ենք վերջակետ:

2 Փոխելով վարդ բառի առաջին տառը՝ ստացիր նոր բառեր և գրիր:

5 **Բառը բառի մեջ**

Բանաստեղծության վերնագրի մեջ գտիր նոր բառեր՝ առանց տառերի տեղերը փոխելու:

ԱՌԱՋԱԴՐՈՒՄ Է ԳԻՐՔԸ

1 Շարունակիր

թագավոր – թագ ունեցող
բեղավոր – .... պոչավոր – ....
փետրավոր – .... պոզավոր – ....

5 Շարունակիր

Վազ տալ – վազել	Խաղ անել – ....
Պար գալ –	Լող տալ – ....

6 Տրված բառերը գրիր համապատասխան հարցերի տակ.

թուղթ, աղվես, չարչարվում է, գյուղ, խաբում է, հասնում է, խաբեբա, նստում է, մարդ, միամիտ, խորամանկ, գայլ, անգրագետ, գլուխ, իշխան, գյուղացի, երեխա:

Օրինակ՝

Ո՞վ	Ինչ	Ինչպիսի	Ինչ է անում
մարդ	աղվես	խաբեբա	չարչարվում է

2 Ինչ ես տեսնում նկարում: Պատմիր քո ընտանիքի մասին:

3 1. Ինչերն են թափվում ծառից:
2. Տերևներն ինչ են լինում:
3. Ո՞ր տերևներն են թափվում:

4 Պատասխանների առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը գրիր տետրում:

7 Գրիր, թե ինչ է անում տղան

8 Վերադասավորիր նկարները՝ հիշելով բեզ ծանոթ հեքիաթը և պատմիր:

ՄԵՐ ԽԱՂԱՂ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչո՞ւ է այս բաժինը կոչվում «Մեր խաղաղ տունն ու ընտանիքը»: Ուրիշ ի՞նչ վերնագիր կընտրեիր այս բաժնի համար:
2. Պատմի՛ր ձեր տան, ընտանիքի մասին:
3. Ի՞նչ բառերով կբնութագրես մայրիկիդ, հայրիկիդ:
4. Պատկերացրո՛ւ, որ դու ուրիշ քաղաքում ես ապրում և շատ ես կարոտել պապիկիդ ու տատիկիդ: Նամակ գրի՛ր նրանց:
5. Ծնողներիդ խնդրի՛ր, որ մի հետաքրքրաշարժ դեպք պատմեն քո մանկությունից: Եթե քեզ դուր գա այդ պատմությունը, ապա գրի՛ր և կարդա՛ դասարանում:
6. Ձեր ընտանիքի անդամներին հարցրո՛ւ, թե նրանցից յուրաքանչյուրը որ առածն է ամենաշատը սիրում: Գրի՛ր և կարդա՛ ընկերներիդ համար:
7. Ի՞նչ խրատներ են տալիս պապիկն ու տատիկը: Գրի՛ր և համեմատի՛ր ընկերներիդ գրի առած խրատների հետ:
8. Ձեր ընտանիքում կա՞մ քեզ համար շատ սիրելի, շատ հետաքրքրական այնպիսի մի բան, որի մասին կուզենաս պատմել: Պատմի՛ր, դա կհետաքրքրի նաև քո ընկերներին:
9. Մտքում լրացրո՛ւ խաչբառը: Ստացված բառերով ստեղծի՛ր մի պատմություն:
10. Պարզ բառերը միացրո՛ւ իրար և ստացի՛ր բարդ բառեր: Չմոռանաս ա տառը:

					ն	կ	ե	ր
		շ	ե		ք			
		տ	ա		ի	կ		
			հ		յ	ր	ի	կ
		տ	ու					
մ	ա	յ	ր		կ			
					ու	յ	ր	ի	կ

հող		ծառ
օր		տուն
տոն	ա	քաղաք
դեղ		ցույց
մայր		մաս

11 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

ԲԱՐԵՎ, ԻՆՉ ՍԱՌՆ ԵՆ ՁԵՌՔԵՐԴ, ՁՄԵՌ

ՓԱՓՈՒԿ ՁՅՈՒՆ

Գեղամ Սարյան

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Ձգո՛ւյշ իջիր դաշտերին.
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:
Հանդա՛րտ, կամա՛ց իջիր, այնպես՝
Ծաղիկները չարթնանան,
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ,
Ձգո՛ւյշ, զգո՛ւյշ անսահման:
Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Հանգի՛ստ, խաղա՛ղ իջիր վար.
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար*:

Հարցեր

1. Հեղինակն ինչ է խնդրում ձյունից:
2. Իսկ դո՞ւ ինչ կխնդրես:
3. Քո կարծիքով՝ ինչ երազներ են տեսնում ծաղիկները:

1 Ի՞նչ բառերով կնկարագրես ձմեռը:

3 Ինչպիսի՞ն է ձյունն ըստ բնագրի: Ո՞րիշ ինչպիսի՞ն կարող է լինել ձյունը: Գրի՛ր տետրում:

4 Ծաղիկ բառով կազմի՛ր բարդ բառեր:
Օրինակ՝ ծաղկառատ:

Շուտասելուկ

Ձյուն է, ձմեռ, ձյունաբուք,
Զանձրացել են ձի՛ ու ձուկ:
Ո՞ր հնչյունն է ամենաշատը կրկնվում:



2 Շարունակի՛ր

հաց թխող – հացթուխ
պատ շարող – ....
կոշիկ կարող – ....
սուտ ասող – ....
ճիշտ խոսող – ....

5 Վանդակներում «թաքնված են» ընտանի կենդանիներ: Խաչբառը գծի՛ր տետրում և լրացրո՛ւ:

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ ԱՄԵՆՔԻՆ

Հովհաննես Թումանյան

Դաշտ ու անտառ, գյուղի ճամփան
Ծածկվել են մի թիզ ձյունով.
Էլ չի ճարվում ուտելու բան,
Ո՞վ է տեսել էս տեսակ սով.
Ո՛չ մի ցորեն, ո՛չ մի հատիկ...
Խնդրում ենք ձեզ, բարի՛ մարդիկ,
Աստծո՛ւ սիրուն՝ մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Շուտով կգան օրեր գարնան,
Մենք ձեզ համար կերգենք զվարթ*
Ու փոխարեն ձեր լավության՝
Ձեր պարտեզը, այգին ու արտ
Կմաքրենք մենք թրթուրներից*,
Ճիճուներից ու որդերից.
Միայն հիմա՝ մի կտոր հաց,
Կոտորվեցինք, մեռանք սոված:

Մի խումբ ծտերի անունից՝
Ծիտիկ Ճնճղուկյան



Հարցեր

1. Ճնճղուկներն ինչո՞ւ են դիմում մարդկանց: Ինչի՞ մասին են նամակ գրել նրանք:
2. Իսկ դու օգնո՞ւմ ես թռչուններին: Ինչպե՞ս:

Առած

Լավությունն արա՛, գու՛ր գցիր, շուկը չիմանա, Հասկացած կիմանա:

1 Պատասխանիր Ծիտիկ Ճընճղուկյանի նամակին: Վերջում գրիր քո հասցեն:

2 Զուր բառով և ներքևի բառաշարքով կազմիր բարդ բառեր և գրիր տետրում.
ծաղիկ, հոր, հարս, անցք, աման, շուն:

3 Բնագրից ընտրիր չորստառանի երեք բառ, դարձրու խառնագիր, առաջարկիր ընկերոջդ:

4 Գրիր մի քանի թռչունի անուն:

5

դժ	սիրտ
ավոր	բախտ
ան	ձի

Օգտվելով սյունակներից՝ կազմիր բառեր:
Ինչով են տարբերվում այդ սյունակները:

ՈՐՍՈՐԴ ՎԻՆԻ ԹՈՒԽԸ

Ալեքսանդր Միլն

Ձմեռային հիանալի օր էր: Վինի Թուխը քայլում էր դանդաղ՝ ուշադրությամբ ոտքերի տակ նայելով:

– Հեյ, Թուխ,– կանչեց Դնչիկը:– Ողջույն, Թուխ: Այդ ինչ ես անում:

– Հետապնդում* եմ մեկին,– խորհրդավոր* ձայնով պատասխանեց Թուխը:– Այստեղ նայիր,– նա մատնացույց արեց ուղիղ իր ոտքերի առջև:– Ինչ ես տեսնում:

– Հետքեր,– ասաց Դնչիկը:– Թաթերի հետքեր... Թուխ: Դու կարծում ես... որ սա... սարսափելի Բոբոն է:

– Կարող է պատահել,– ասաց Թուխը:

Եվ նա առաջ քայլեց, իսկ Դնչիկը վազեց նրա հետևից: 77

Հարցեր

1. Ինչ էր անում Վինի Թուխը:
2. Ինչու վախեցավ Դնչիկը:
3. Ինչ ես կարծում՝ ում հետքերն էին ձյան վրա:



1 Պարզիր, թե որը որի հետքն է: Պատասխանները գրիր տետրում:

Օրինակ՝ ագռավ – 3:

ողջույն

2 **ՎԻՆԻ ԹՈՒԽԻ ՀԱՆԵԼՈՒԿԸ**

Կա մի թռչուն
Իմաստուն,
Գիշերով է նա թռչում,
Իսկ ցերեկը՝ մտնում քուն:

Պատասխանը փնտրիր նկարում:

3 **ՎԻՆԻ ԹՈՒԽԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ**

Արտագրիր բառայունները: Ո՞ր տառերով են դրանք իրարից տարբերվում: Այդ տառերով կազմիր երկու չորստառանի բառ:

Սուր շեղ
սար նեղ

Հետքերը պտտվում էին փոքրիկ պուրակի* շուրջը…

– Նայի՛ր,– հանկարծ շշուկով գոռաց Թուխը և մատնացույց արեց ձյունը:– Նոր հետքեր են: Հայտնվել է երկրորդ գազանը:

– Թո՛ւխ,– ճղճղաց Դնչիկը,– դու կարծում ես, թե դա՞ էլ է Բոբո:

– Չէ՛,– ասաց Թուխը,– այս հետքերը տարբերվում են… Այստեղով անցել է մի Բոբո և մի, ասենք, Բեբո: Կամ էլ՝ հակառակը՝ մի Բեբո և մի Բոբո:

Եվ նրանք քայլեցին առաջ:

– Մի րոպե,– հանկարծ թաթը տնկելով՝ ասաց Թուխը:

Նա նստեց ու մտքի մեջ ընկավ՝ խո՛ր-խոր: Հետո թաթը դրեց հետքի վրա:

– Այո-ո՛,– ասաց նա:– Հիմա ամեն ինչ հասկացա: Սկզբում ես մենակ պտտվել եմ այս պուրակի շուրջը: Հետո ինձ մոտեցել ես դու: Մենք սկսել ենք երկուսով պտտվել: Այսինքն՝ մենք տեսել ենք մեր սեփական ոտնահետքերը:

Թուխն ու Դնչիկն ուրախացան և միասին գնացին ճաշելու:

Հարցեր

1. Հետքերն ինչո՞ւ էին շատանում:
2. Վինի Թուխն ինչպե՞ս իմացավ, որ հետքերն իրենցն են:

ուրնահերթ

1 Հանելուկ

Ձյունը եկավ,
Դու գնացիր,
Նա մնաց:

2 Աջուձախ

Ահա տառեր՝ ա, ձ, ն, ց, մ, ք, թ:

Ահա բառեր՝ դեղ, երեկ, շուն, գիր, նավ, ստել, ոլորվել:

Գտի՛ր, թե որ տառը որ բառի աջից կամ ձախից ավելացնելով՝ կստացվի նոր բառ:

Օրինակ՝ ա + շուն = աշուն:

3

Դու հավանաբար դիտել ես Վինի Թուխի մասին մուլտֆիլմը: Իսկ քեզ դուր եկա՞վ այս պատմությունը: Եթե այո՝ կարդա Վինի Թուխի մասին պատմող գիրքը:

4

Լրացրո՛ւ բաց թողնված տառերը.

Թ□խ, թ□թ, □ղջույն, □ր, մ□ասին, հ□տք:

5

Ի՞նչ գոռաց Վինի Թուխը շշուկով:

Բնագրից կարդա՛ այդ տողերը Վինի Թուխի պես:

ԱՆԱՀԻՏՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Սուրեն Վարդևանյան

Գիշերը ձյուն տեղաց: Եվ երբ երեխաներն առավոտյան բակ իջան, նրանց ուրախությանը չափ չկար: Իրար ձայնելով՝ սկսեցին ձնագնդի խաղալ, ձնեմարդ պատրաստել: Երեխաների հետ ուրախանում ու թռչկոտում էր մի փոքրիկ շնիկ:

Երեկոյան, երբ գնում էին տուն, Անահիտը տեսավ, որ շնիկը մնալու է դրսում:

– Մայրիկ,– տուն մտնելով՝ ասաց Անահիտը,– գիտե՞ս՝ բակում ինչ պատահեց. քիչ էր մնում ընկնեի, լավ է՝ շնիկն ինձ պահեց:

– Իսկապե՞ս,– ժպտաց մայրիկը:

– Իսկապես, մայրիկ, հիմա էլ դրսում ցուրտ է: Շնիկը կմրսի, չէ՞:

– Դու քնի՛ր, իմ բարի՛ աղջիկ:

Առավոտյան, երբ Անահիտն արթնացավ, կարծես երազում լիներ: Միջանցքում շնիկն էր քնած, իսկ մայրիկն ավելի պայծառ էր ժպտում:

Տրզանյք

Հարցեր

1. Ինչ էին անում երեխաները: Ինչու՞ էին նրանք ուրախ:
2. Ինչ պատմեց Անահիտը շնիկի մասին:
3. Ինչու՞ էր մայրիկը ժպտում:
4. Դու համաձայն ես մայրիկի հետ: Անահիտը բարի՞ էր:

1 Նկարելուկներ

Տետրում կողք կողքի գրի՛ր նկարներում պատկերված առարկաների անունները: Տե՛ս, թե ինչ ստացվեց:



2 Խառնագիր

Վերականգնի՛ր յնձու, ջղիակ, տնու, տուրց, նշիկ բառերը: Բնագրում կարդա այն նախադասությունները, որոնցում դրանք կան:

3

Ձնաբուք բարդ բառը կազմված է ձյուն և բուք պարզ բառերից՝ արմատներից:

Բնագրից ընտրի՛ր այդպիսի բառեր և գտի՛ր դրանց բաղադրիչները:

ԾԱՂԻԿՆԵՐԸ

Հովհաննես Թումանյան

– Ո՞ւր գնացին ծաղիկները:
– Սրուս, քնած են հողի տակ՝
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սպիտակ:

Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ* ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կտանի:

«Ելեք,– կասի,– իմ մանուկներ».
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան:

Հարցեր

1. Պատմիր՝ ո՞ւր գնացին ծաղիկները:
2. Ինչո՞ւ ձյան շերտի տակ բույսերը չեն սառչում:

Գտիր և կարդա այդ մասին հեղինակի՝ Հովհաննես Թումանյանի տողերը:

1 Մտածիր՝ ո՞րն է գարնան
ա. ամենահամարձակ,
բ. ամենահամեստ,
գ. ամենագեղեցիկ ծաղիկը:

2 Պատկերացրո՛ւ՝ այս ծաղիկներին հրավիրում ես ծաղկահանդեսի:

Ո՞ւմ ինչպես կդիմես, որ խընդրանքդ չմերժեն:

3 Ասա՛ մեկ բառով

Համ չունեցող – ....
Հոտ չունեցող – ....
Գին չունեցող – ....
Գույն չունեցող – ....

Ինչը կարող է լինել այդպիսին:

4 Այնպես կարդա բանաստեղծության առաջին քառատողը, որ ծաղիկները չարթնանան:

5 Հորինի՛ր մի երկխոսություն աչիկները բացած ծաղիկների և գարնան արևի միջև:

6 Այնպես կարդա բանաստեղծության վերջին քառատողը, որ ծաղիկներն արթնանան:

ԲԱՐԵՎ, ԻՆՉ ՍԱՌՆ ԵՆ ՁԵՌՔԵՐԴ, ՁՄԵՌ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Այս բաժնի նյութերն ընթերցելիս՝ ինչ տրամադրություն առաջացավ քո մեջ: Ինչո՞ւ: Ուրիշ ինչ վերնագիր կարող ես դնել այս բաժնին:
2. Կարո՞ղ ես հորինել հանելուկներ ձմռան, ձմեռային բնության, ձյան և փաթիլի մասին:
3. Ձմռանն ինչ գեղեցիկ տոն ենք նշում: Փորձի՛ր հորինել հանելուկ, ոտանավոր կամ հեքիաթ՝ նվիրված այդ տոնին:
4. Ի՞նչ կխնդրես Ձմեռ պապիկից: Գրի՛ր նամակ:
5. Համեմատի՛ր Գ. Սարյանի «Փափուկ ձյուն» և Հովհ. Թումանյանի «Ծաղիկները» բանաստեղծությունները: Որո՞նք են նմանությունները և տարբերությունները:
6. Ձմեռող ինչ թռչուններ գիտես: Դու օգնո՞ւմ ես նրանց: Ինչպե՞ս:
7. Ձմռանը ընկերներիդ հետ բակում ինչ խաղեր ես խաղում: Պատմի՛ր ձմեռային ձեր զվարճությունների մասին:
8. Կենդանիները, թռչունները ինչպե՞ս են հաղթահարում ձմռան ցրտաշունչ օրերը: Եթե չգիտես, հարցրո՛ւ մեծերին:
9. Լրացրո՛ւ բառերը: Դու ստացար կարմիր սյունակում գրված բառի հատկանիշները ցույց տվող բառեր:

   Գրի՛ր դրանց հակառակ իմաստն արտահայտող բառերը:

փ	ա		ու	կ			
	մ		ք	ու	ր		
ա	ն		ի	վ			
ս	պ		տ	ա	կ		
			ա	ց	կ	ա	ն

10 Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ:

ՓՈՔՐԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Ալ – մուգ կարմիր

Ակնամոմ – ծաղկահյութերից գոյացող նյութ, որ պատրաստում են մեղուները և ծեփում փեթակի անցքերը

Ահարկու – ահ, սարսափ գցող, խիստ վախեցնող

Ահեղ – ահարկու, սարսափելի, ուժգին

Անապատ – անջուր, աղքատ բուսականությամբ, ավազածածկ տարածք

Անհոգ – հոգսերից ազատ, ապահով

Անհոգի – անխիղճ, անսիրտ, անտարբեր

Անձրևոց –

Անուշակ – անուշիկ, դուրեկան

Անփույթ – անհոգ, անտարբեր, անուշադիր

Ապուր – ջրիկ կերակուր

Առատ – մեծ քանակությամբ, շատ

Առոք-փառոք – մեծ փառքով, շուքով, համարձակորեն, հանդիսավոր կերպով

Աստծու գոտիկ – ծիածան

Աստղադիտարան – գիտական հիմնարկ, որն զբաղվում է երկնային մարմինների ուսումնասիրությամբ

Աստղանավ – տիեզերանավ, դեպի աստղերը թռչող նավ

Բանջար – ուտելի բույսեր, կանաչի

Բարուր – 1. Երեխային փաթաթելու փոքրիկ սավան. 2. Փոխաբերական իմաստով՝ ծածկույթ, փաթույթ

Բրդել – կտոր-կտոր անել

Գիրուկ – գեր, կլորիկ

Գողտիկ-մողտիկ – գողունի, թաքուն, վախվորած

Դագանակ – մահակ, ձեռնափայտ

Դայակ – դաստիարակչուհի, խնամակալ

Դերձակ – կարուձև անող արհեստավոր

Եզր – ծայր, վերջ, սահման

Երկվորյակ – մի մորից միասին ծնված զավակներից յուրաքանչյուրը

Զայրույթ – սաստիկ բարկություն, ջղայնություն, կատաղություն

Զարհուրելի – սարսափելի, ահարկու

Զորանալ – ուժեղանալ, մեծանալ

Զվարթ – ուրախ, աշխույժ, կայտառ

Ընտելանալ – սովորել, վարժվել, մտերմանալ

Թամբել – թամբը՝ նստելու հարմարանքը, ձիու, էշի, ջորու վրա կապել

Թրթուր – միջատների՝ ձվից դուրս եկած որդ

Թուխ – սևին տվող, մուգ գույնի

Ժայռափոր – ժայռի մեջ փորված

Իրավ – իրոք, իսկապես

Լրագիր – թերթ

Խալ – մաշկի վրա ի ծնե գոյացած բիծ, պուտ, խայտ

Խաղիկ-տաղիկ – ժողովրդական փոքրիկ երգ

Խայտաբղետ – գույնզգույն, խատուտիկ

Խատուտիկ – խայտեր, խալեր, բծեր ունեցող

Խնամել – հոգ տանել մեկի նկատմամբ, սնել, պահպանել, խնամքով, հոգատարությամբ շրջապատել մեկին

Խոշորացնող – խոշոր, մեծ, հստակ ցույց տվող

Խորհրդավոր – գաղտնիք պարունակող

Խուրձ – հնձած հացաբույսի, խոտի կապուկ

Ծիծառ – ծիծեռնակ

Ծիրանի – բոցագույն, դեղնակարմրավուն, ծիրանագույն

Ծխամորճ –

Կալվոր – հացաբույսերից հացահատիկը գյուղատնտեսական գործիքով՝ կամով առանձնացնող, կալսող մարդ

Կավ – հողի նման նյութ, որը խոնավ վիճակում դառնում է խմորի նման: Օգտագործում են քանդակագործության մեջ, շինարարությունում, պատրաստում են կարասներ, պուտուկներ, կժեր և այլն:

Կարաս –

Կիզիչ – կիզող, այրող

Կոտ – հացահատիկ չափելու փայտե աման

Կուժ –

Հանդ – դաշտ, արտ

Հարդ – հացահատիկների մանր կտրատած ցողուններ

Հետապնդել – մեկին հետևել, մեկի հետևից գնալ

Հոգատար – հոգ տանող, հոգսերն իր վրա վերցնող, ուշադիր

Հովիտ – լեռների միջև ձգվող հարթավայր

Հոր – գետնի մեջ փորված խոր փոս

Հուշիկ – կամաց-կամաց, հանդարտ

Ճիտ – վիզ, պարանոց

Մառան – գետնի մեջ փորված նկուղ՝ մթերք պահելու համար

Մատենադարան – հին ձեռագիր գրքերի հավաքումով, պահպանումով զբաղվող հիմնարկություն, գրադարան

Մեգ – գետնի վրա տարածվող թանձր մառախուղ, մշուշ

Մշուշ – մառախուղ, մեգ

Մոլորակ – Արեգակի շուրջը պտտվող և նրանից լույս ստացող երկնային մարմին, օրինակ՝ մեր Երկիրը



Մոլորվել – չիմանալով՝ ուղիղ ճանապարհից շեղվել, ճանապարհը կորցնել

Նազիր – բարձրաստիճան մարդ թագավորական պալատում, նախարար

Նախշուն – նախշերով զարդարված, փոխաբերական իմաստով՝ սիրուն, գեղեցիկ

Նահապետ – այն անձը, որից սկիզբ է առել տվյալ ազգը: Հայերի համար՝ Հայկ Նահապետը:

Նարգիզ – ծաղիկ

Նունուֆար – ծաղիկ

Շուշան – ծաղիկ

Ոսկեզօծել – ոսկեգույն դարձնել, դեղին գույն տալ

Ոստոստել – ցատկոտել

Որոնել – փնտրել, աշխատել հայտնաբերել՝ գտնել

Որոտ – կայծակին ուղեկցող դղրդյուն, ամպի գոռոց

Չալ – խատուտիկ, պուտ-պուտ, գույնզգույն, վառվռուն

Չարչի – մանր-մունր ապրանքներ վաճառող, մանրավաճառ

Պարահանդես – պարելու համար կազմակերպված հանդես

Պոչատ – պոչը կտրված

Պուրակ – ծառապատ տարածք, այգի

Ջրանցք – արհեստական մեծ հուն ջրի համար

Ջրհոր – խոր փոս գետնի ջրաբեր շերտից ջուր հավաքելու և օգտագործելու համար

Ջրվեժ – բարձունքից սրընթաց կերպով ցած թափվող ջրի հոսանք

Սայթաքել – ոտքը սահել

Սաստիկ – ուժգին, բուռն, խիստ

Սեղանատուն – ուտելու և հյուրասիրության սենյակ, ճաշասենյակ

Սինձ – ուտելի բանջարաբույս

Սկահակ – գավաթ, բաժակ

Մնդուկ – հագուստեղենի մեծ արկղ

Սոսի – ծառի տեսակ

Ստորոտ – լեռան ներքևի մասը

Տակ – ճակնդեղ, բազուկ (արմատը)

Տաշտակ – փայտից, թիթեղից, կավից պատրաստած երկարավուն կամ կլոր աման

Տնկի – նոր բուսած, նորածիլ ծառ

Ցող (շաղ) – բույսերի, գետնի վրա նստող ջրի կաթիլներ

Ցրտահար – ցրտահարված, ցրտից վնասված

Ուղեկից – մեկի ճամփորդության, ուղևորության ընկեր, ճանապարհ ցույց տվող

Ուրագ – հյուսնի գործիք



Փարվել – փաթաթվել, գրկախառնվել

Փոփոխակի – փոփոխական, իրար հաջորդաբար փոխարինող

Փչակ – ծառի բնի մեջ փտումից, քայքայումից առաջացած խոռոչ

Փքվել – պարծենալ, մեծամտանալ, քիթը ցցել

Քարհատ – քար կտրող, քար հատող բանվոր, քարտաշ

Քոթոթ – ձագ

Քուրք – մուշտակ

Օրնիբուն – ամբողջ օրը

ՈՐՈՇ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Էջ	
6.	1. Գիրք: 2. Գիրք – գրադարան, խաղ – բակ, դպրոց – աշակերտ: 3. Բառի մեջ ձայնավորների և բաղաձայնների քանակը:
7.	3. Օրինակ՝ Ա, Ի, Օ – ձայնավորներ են, Վ, Դ, Ն – բաղաձայններ են: 4. Գիրք:
8.	4. Կար, թութ, պատ:
9.	2. Աղվես: 3. Նապաստակ:
10.	2. Թ, Լ:
11.	1. Կար: Տես, ես, սան, անել: Պատ, ճառ: Արտ, ասա, անել: Տող, դար, դարձ: 2. Արտ:
12.	2. Արջ:
13.	2. Տանձ, գանձ, գիրք, ձուկ, լող, ձեռք: 4. Թվերը նշում են վանկերի քանակը: 6. Բակ, այծ:
14.	1. Գնդակը, փուչիկը, խնձորը կլոր են, մատիտը, խողովակը, քանոնը երկար են: 5. Չմուշկ (մնացած բառերն ավարտվում են *իչ*-ով):
15.	1. Ափսե – ճաշ, ծով – նավ, կատու – մլավոց, գրիչ – տետր: 2. Փչակ: 4. Ձյուն, ձմեռ:
19.	1. Թաղ, խաղ, կաղ, ճաղ, մաղ, շաղ, տաղ: 2. Հարս, պաս, կաթ: 3. Բառ, կուտ, կետ: 6. -րել: 4. Արդուկ, աթոռ, սեղան:
20.	17. Դպրոց:
22.	2. Մուկ, ծառա, շվի: 4. Կանաչ, հալվել, վարել՝ գարուն: Արևոտ, շոգ, լողալ՝ ամառ: Դեղին, մշուշ, անձրև՝ աշուն: Սպիտակ, ձյուն, սառույց՝ ձմեռ: 5. Ապակի – լուսամուտ, ձմեռ – ձյուն, գիրք – տառ, ջուր – ձուկ:
23.	4. Օրինակ՝ ծառ – ծառուղի, ծառախիտ, ծառոտ, տոնածառ: Քար – քարոտ, քարե, քարեքար, քարտաշ: Մատ – մատնոց, մատանի, մատանեմատ, մատնաքաշ: Լող – լողալ, լողորդ, լողազգեստ, թևալող:

Էջ	
24.	4. Բառերը տրված են այբբենական հերթականությամբ:
25.	4. Կահույք, գրենական պիտույքներ, կենդանիներ, մրգեր:
27.	1. Խաղող, խնձոր, տանձ: Մանուշակ, ձնծաղիկ, վարդ:
28.	1. Թզուկ, սար, գետ, վանկ, երեխա, նավակ, գնացք:
29.	1. Տողադարձ:
32.	9. Ոսկեծամիկ:
35.	1. Գյուղ: Յուղ: Կարում էր: Ես: Հոր: 2. Ձու: 4. Փիղ:
39.	4. Բուրավետ ծաղիկ, համեղ միրգ, հզոր բանակ, կապույտ երկինք:
40.	1. Օրինակ՝ Նուբար, Նունուֆար, Նունե: Գագիկ, Գայանե: Լուսինե: Նարեկ, Նարինե:
48.	2. Բարակել – բարակ, կարմրել – կարմիր, չորանալ – չոր, կանաչել – կանաչ: 3. Ձուկ – ձու = կ: Լամպ – ամպ = լ:
51.	3. Հայրիկ, հայրական, հայրենի, հայրաբար, անհայր:
54.	1. Քույր, մայր, բակ, խաղ, մեկ: 2. Նման – տարբեր, տխրել – ուրախանալ, գեղեցիկ – տգեղ, մաքրել – կեղտոտել: 3. Դեղձ – դեղ = ձ: Կոճղ – կոճ = ղ:
55.	1. Օրինակ՝ սափոր, լավաշ, թագավոր, կավիճ, մատիտ, ծաղիկ:
56.	4. Հարուստը՝ գեր, ագահ, շատակեր, հիվանդ, դանդաղաշարժ: Հովիվը՝ առողջ, քչակեր, արագաշարժ, աշխատասեր, բարեկազմ:
57.	2. Ծիրան: 3. Խնձորը՝ կլոր, համեղ, անուշահոտ: Ապակին՝ փշրվող, ուղղանկյուն, թափանցիկ:
58.	1. Թութ: Տուր: Նուշ: Շատ:
60.	11. Ձուկ: 12. Արև:

62. 1. Սարդ, դրամ, շնիկ: 5. Հասմիկ, ձնծաղիկ, կակաչ:

63. 1. Պարզ՝ թիթեռ, օր, դաշտ, գույն: Ածանցավոր՝ թիթեռնիկ, տնակ, գունավոր, մայրիկ: 3. Ծաղիկ – թիթեռ, երկինք – ամպ, մայրիկ – աղջիկ, գագաթ – սար:

64. 1. Ձուկ: 3. Ձուկ, ուղի:

65. 1. Կապիկ – անտառ, ձուկ – ծով, գորտ – ճահիճ, գետաձի – գետ, ձի – դաշտ: 2. Տատիկը:

66. 1. Պատշար, կեսօր, հացաման, արևելք: 2. Սավան, լամպ, սուրճ, սեղան, ծափ, տպարան: 3. Ատամ, մարգ, մաշկ, վտակ: (Պարզ:) 4. Ուղղաթիռը:

68. 1. Օրինակ՝ կեր, հեր, սեր, վեր, տեր: 2. Եղանը (մնացածը հյուսնի գործիքներ են): 4. **Ր** տառը:

69. 6. Բարև, սոխակ, զանգակ, խաչքար, օղակ:

70. 2. Օրինակ՝ բարդ, զարդ, հարդ, մարդ, ջարդ, սարդ: 5. Նկար, կար, ար, չու, ութ:

72. 9. Ընտանիք: 10. Հողամաս, օրացույց, տոնածառ, դեղատուն, մայրաքաղաք:

74. 4. Օրինակ՝ ծաղկաշատ, ծաղկապսակ, ծաղկաշղթա, արևածաղիկ, ձնծաղիկ, ջրծաղիկ:

75. 2. Ջրծաղիկ, ջրհոր, ջրահարս, ջրանցք, ջրաման, ջրշուն: 5. Դժբախտ, ձիավոր, անսիրտ:

76. 1. Ավտոմեքենա՝ 2, դահուկորդ՝ 6, Դնչիկ՝ 5, երեխա՝ 4, Վինի Թուխ՝ 1: 2. Բու: 3. Աշուն, անուշ:

77. 1. Հետք: 2. Դեղձ, ցերեկ, գիրք, նավթ, նստել, մոլորվել:

78. 1. Հացաման, սեղանատամ, դեղատուն, աստղանավ: 2. Ձյուն, աղջիկ, տուն, ցուրտ, շնիկ:

79. 3. Ձուրը:

80. 9. Փաթիլ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄ ԴՊՐՈՑԸ ԵՎ ԳՐՔԵՐԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ 3
Բարև՛, ես գիրքն եմ – Վաս (Վաչագան Ա. Սարգսյան) 4
Իմ այս գիրքը – Ռազմիկ Դավոյան 6
Գիրք – Վռամ Հովսեփյան 7
Պատմվածքն ընթերցող էր փնտրում – Ռեյն Ռուադ 8
Արան ու Շարան – Վաս 10
Ուրագ ու սղոց – Հովհաննես Թումանյան 11
Արջն ու գիրքը – Հոբոս Ապեր 12
Քիչ ենք, բայց ձայնավոր ենք – Վաս 13
Չարաճճի Չ տառի արկածները – Վաս 14
Սուրենն ու Աշոտը – Վաս 16
Անտեսանելի գլխարկ՝ տառերից մեկի գլխին – Վաս 17
Առաջադրում է գիրքը 19
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 20

ՈՍԿԵԾԱՄԻԿ ԱՇՈՒՆ 21
Աշուն տատիկը – Պատվական Խաչատրյան ... 21
Աշուն – Հովհաննես Թումանյան 22
Տերևաթափ – Հովհաննես Թումանյան 23
Ինչու է նոյեմբերը գույնզգույն – Նիկոլայ Սլադկով 24
Աշուն – Գրիգոր Եղիկյան 26
Ամիսներ և չորս եղանակ – Ղազարոս Աղայան 27
Ինչպես բառերը գետն անցան – Վաս 28
Պարահանդես անտառում – Լեդա Միլևա 30
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 32

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է 33
Երեք աղջիկների հեքիաթը – Վաս 34
Հանելուկ, դարձվածք 34
Առած, դարձվածք 36
Տաղիկ-խաղիկ 37
Շուտասելուկ, սուտասելուկ 38
Օրոր և օրորոցային 39
Խնդուկ-խնդմնդուկ 40
Բառախաղ, հաշվելուկ 41
Առած, ասացվածք 42
Օրհնանք-մաղթանք 43
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 44
Ստուգի՛ր քեզ 45

ՏԵՍՆԵՍ՝ ԼԱ՞Վ Է, ԹԵ՞ ՎԱՏ 47
Ճուտիկը – Կոռնեյ Չուկովսկի 48
Զրույց հեռախոսով – Լևոն Միրիջանյան 50
Ո՞ր մեկս կամաչի – Ժողովրդական զրույց 51
Կապույտ տերևներ – Վալենտինա Օսեևա 52
Ո՞վ է մեզանից գեղեցիկը – Գեղեցիկ Մովսիսյան 54
Հարուստն ու հովիվը – Ժողովրդական զրույց 56
Թութակը – Մարո Աբրահամյան-Թաթիկյան 58
Տղան ու մրջյունը – Լիպարիտ Սարգսյան 59
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 60

ՄԵՐ ԽԱՂԱՂ ՏՈՒՆՆ ՈՒ ԸՆՏԱՆԻՔԸ 61
Մայրիկի ծաղիկը – Զորայր Խալափյան 62
Հեքիաթ ծեր ձկան մասին – Սլավկա Մանևա . 64

Զարմանալի են մայրիկները – Մարո Աբրահամյան-Թաթիկյան 66
Ծեր պապն ու թոռը – Գրիմ եղբայրներ 68
Նկարչություն – Ռազմիկ Դավոյան 70
Առաջադրում է գիրքը 71
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 72

ԲԱՐԵՎ, ԻՆՉ ՍԱՌՆ ԵՆ ՁԵՌՔԵՐԴ, ՁՄԵՌ .. 73
Փափուկ ձյուն – Գեղամ Սարյան 74
Մի բաց նամակ ամենքին – Հովհաննես Թումանյան 75
Որսորդ Վինի Թուխը – Ալեքսանդր Միլն 76
Անահիտն ու շնիկը – Սուրեն Վարդևանյան ... 78
Ծաղիկները – Հովհաննես Թումանյան 79
Ամփոփիչ հարցեր և առաջադրանքներ 80
Փոքրիկ բառարան 81
Որոշ առաջադրանքների պատասխանները ... 84

Բնագրերը ենթարկվել են որոշ փոփոխություններ, համապատասխանեցվել են գրական հայերենի կանոններին, երկրորդ դասարանցիների ընկալումներին:

ՎԱՉԱԳԱՆ ԱԴԻԲԵԿԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԱԶԱՏԻ ԹՈՐՈՍՅԱՆ
ՍՈՒՍԱՆՆԱ ՂՈՒԿԱՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀԵՂԻՆԵ ՎԱՐԴԳԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ–2

Դասագիրք 2-րդ դասարանի համար

Խմբագիրներ՝ Հրանտ Վարդանյան
Արտաշես Թադևոսյան

Շարվածքը՝ Սվետլանա Այվազյանի
Էջադրումը՝ Միքայել Աբրահամյանի
Ձևանմուշը՝ Վաչագան Ա. Սարգսյանի

«ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն
Երևան, Ղ.Փարպեցու, 9/7, հեռ. 53-79-81, 53-79-82
E-mail: manmar@manmar.am